Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ 1915 Թ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

«ԳԻՏԵԼԻՔ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1990

ԳՄԴ 63.3(2Հ)52
Հ 205

Մեծ եղեռնի 75-րդ տարելիցին

Գրախոս՝ Հ. Մ. Պողոսյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Պատասխանատու խմբագիր՝ Հ. Գ. Ինճիկյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Համբարյան Ա. Ս.

Հ 205 *Արևմտահայերի 1915 թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը /(Պատ. խմբ.՝ Հ. Գ. Ինճիկյան).— Եր.։ ՀԽՍՀ «Գիտելիք» ընկ., 1990— 88 էջ.— (Օգն. դասախոսին /ՀԽՍՀ «Գիտելիք» ընկ.)։*

Սույն գրքույկում տրվում է արևմտահայերի 1915 թ. կոտորածների ու գոյամարտերի համառոտ և ամբողջական պատմությունը։ Նշվում է, որ երիտթուրքերը, օգտագործելով պատերազմական իրադրությունը, ձեռնամուխ եղան իրենց նախապես մշակած հայաջինջ քաղաքականության իրագործմանը, որի քաշելով շուրջ 1,5 միլիոն հայ։ Հանկարծակի եկած հայերը, այնուամենայնիվ, կարողացան արագորեն կազմակերպվել և մի շարք տեղերում դիմել ինքնապաշտպանության։ Նշանավոր էին նրանց գոյամարտերը Վանում, Շապին-Գարահիսարում, Ուրֆայում, Սուեդիայում և այլուր։ Համառ պայքարի շնորհիվ ինքնապաշտպաններից շատերը փրկվեցին։ Հայ ժողովրդական վրիժառուները արժանին հացեղասպանության կազմակերպիչներ-

վում է ընթերցող լայն շրջանների

ԳՄԴ 63.3(2Հ)52

ırkisovich Amбarян

САМООБОРОННЫЕ БОИ
ЗАПАДНЫХ АРМЯН В 1915 Г.

Ереван, издательство «Гителик», 1990

На армянском языке

ISBN 5—8079—0140—1

© «ԳԻՏԵԼԻՔ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 1990

1914 թ. օգոստոսի 1-ին բռնկվեց առաջին համաշխարհային պատերազմը։ Տասնամյակներ շարունակ լիցքավորված իմպերիալիստական տերությունները նետվեցին ռազմադաշտ՝ իրարից հոզատարածքներ խլելու, պրոլետարական ու ազգային ազատագրական շարժումները ճնշելու, ստրկացված ժողովուրդների հին լուծը նորով փոխարինելու, բայց ոչ երբեք նրանց ազատագրելու համար։ Իրար դեմ դուրս եկան կապիտալիստական երկու խմբավորում՝ «Եռյակ միությունը» (Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան), որին շուտով միացան Թուրքիան ու Բուլղարիան, և «Անտանտը» (Անգլիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը), որին հետագայում դաշնակցեցին Ճապոնիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները և Ռումինիան։

Այդ պետություններն ունեին նախօրոք մշակած իրենց զավթողական պլանները։ Ռուսաստանն ուզում էր տիրանալ Գալիցիային, թափանցել Բալկաններ, նվաճել Բոսֆորն ու Դարդանելը,

ապա Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան և դուրս գալ Միջերկրականի տաք ջրերը։ Իսկ Թուրքիան ձգտում էր Ռուսաստանից խլել Ղրիմը, Կովկասը, Միջին Ասիան և այլ հողեր։ Դրա հետ միասին նա փորձում էր օգտագործել պատերազմական իրադրությունը և բնաջնջել արևմտահայերին, գտնելով, որ նրանք խանգարում են իր նվաճողական ծրագրերի իրագործմանը և նպատակադրվելով մեկընդմիշտ վերջ տալ Հայկական հարցին։

Ռուսաստանի և Թուրքիայի միջև պատերազմը սկսվեց 1914 թ. նոյեմբերի 2-ին՝ Թուրքիայի հարձակումով։ Նրանցից յուրաքանչյուրը ջանում էր օգտագործել հայերին, տալով նրանց հրապուրիչ խոստումներ։ Երիտթուրքական ղեկավարներն իրենց գործակալների միջոցով հայերին խոստանում էին ինքնավարություն, եթե նրանք ոտքի կանգնեն Ռուսաստանի դեմ, իսկ Կովկասի ռուսական զինվորական շրջանները հուսադրում էին արևմտահայերին նրանց դրության բարելավումով, եթե հանդես գան Թուրքիայի դեմ։

Հայ հասարակական քաղաքական տարբեր շրջաններ տարբեր դիրքերում կանգնեցին պատերազմի հանդեպ։ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք արքեպիսկոպոս Զավենը հայտարարեց, թե ներկա պատերազմը մի փոթորիկ է, որից հայերը հազիվ թե ազատվեն անվնաս։ Անհրաժեշտ է, որ նրանք ցուցաբերեն շրջահայացություն, լրջամտություն, դրացի ժողովուրդների հանդեպ հարգանք ու ողջամտություն, իսկ զորակոչ-

վածները մեկնեն բանակ և կատարեն իրենց պարտքը հայրենիքի նկատմամբ[1]։

Արևմտահայ լիբերալները նույնպես որդեգրեցին այդ դիրքորոշումը։ Նրանց պարբերականներից մեկը 1914 թ. նոյեմբերի 7-ի իր առաջնորդողում գրում էր. «Օսմանյան տերությունը մեծ պատերազմը մը ճգնաժամին մատնված է, և մեր ամենուս անկ է կատարել մեր վրա ինկած պարտականության բաժինը»[2]։ Հայերը պիտի մերժեն անջատողական ձգտումները, պինդ փարվեն Օսմանյան հայրենիքին, մշակեն բարի հարաբերություններ մահմեդական հարևանների հետ և գործով ապացուցեն իրենց նվիրվածությունը կայսրությանը։

Օսմանյան հայրենիքի պաշտպանության կոչով հանդես եկան նաև Թուրքիայում գործող արևմտահայ քաղաքական կուսակցությունները։ Հենց պատերազմի սկզբից նրանք հայտարարեցին, որ հայերը պետք է մեկնեն բանակ, կատարեն իրենց հայրենասիրական պարտականությունները, ունկնդրելով Թուրք կառավարության կոչերին։

Հաշվի առնելով հայերի բացառիկ ծանր կացությունը Թուրքիայի պայմաններում, գրեթե նույն կարծիքը հայտնեցին նաև արևմտահայ դեմոկրատական մտավորականները։

---

1 Տե՛ս Զավեն արքեպիսկոպոս, Պատրիարքական հուշերը, վավերագրեր և վկայություններ, Կահիրե, 1947, էջ 50։

2 «Բյուզանդիոն», 1914, № 5489։

Այլ էր սակայն արևելահայ հասարակական քաղաքական շրջանների դիրքորոշումը։ Երբ սկըսվեց առաջին աշխարհամարտը, Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ը 1914 թ. օգոստոսի 5-ին դիմեց Կովկասի փոխարքային, խնդրելով, որ ցարական կառավարությունն իր ձեռքը վերցնի արևմըտահայերի կյանքի ու գույքի պաշտպանության, 1914 թ. հունվարի 26-ի հանրահայտ բարենորոգումների իրականացման և Թուրքիայի հայկական ինքնավարության ստեղծման հարցի լուծումը, իսկ նոյեմբերի 8-ին, երբ բացվել էր աշխարհամարտի կովկասյան ռազմաճակատը, նա արդեն խնդրում էր, որ ռուսական ինքնակալն Արևմըտյան Հայաստանի վեց վիլայեթներից (Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սվազի) ու Կիլիկիայից իր հովանու տակ կազմի ինքնավարություն ու դրանով կատարի «Թուրքիայի լծի տակ դարերով տառապող քրիստոնյա ժողովուրդների ազատագրման իր պատմական միսիան»[1]։

Գրեթե նույնպիսի դիրքում կանգնեցին նաև արևելահայ լիբերալները։ Նրանց օրգան «Մշակի» կարծիքով, եթե ռուս-թուրքական պատերազմ ծագի, Ռուսաստանի կողմից այն կլինի ոչ թե նվաճողական, այլ ազատագրական, քանի որ նա կփրկի օսմանյան գարշապարի տակ տառապող արևմտահայերին[1]։ Իսկ երբ սկսվեց պատերազմը, թերթը հայտարարեց, որ այժմ, քան երբևէ հեշտանում է Հայկական հարցի լուծումը, որովհետև Ռուսաստանը, Անգլիան ու Ֆրանսիան գործում են համերաշխ, իսկ «Եոյակ միությունը» չի կարող տապալել նրանց ձեռնարկումները։ «Մշակի» կարծիքով Հայկական հարցը կարող է վճռվել երկու եղանակով՝ կամ Արևմտյան Հայաստանը կկցվի Ռուսաստանին իբրև նվաճված տարածություն, կամ այն կստանա ինքնավարություն՝ Ռուսաստանի կազմում։ Այդ երկու եղանակն էլ համարելով ընդունելի, թերթը գերապատվությունը տալիս էր երկրորդին[2]։

Ավելի ակտիվ գործունեություն ծավալեցին հայ քաղաքական կուսակցությունները։ Դաշնակցությունը դրական վերաբերվեց պատերազմին, գտնելով, որ իրական պայմաններ են ստեղծում Ռուսաստանի օգնությամբ Հայկական հարցի լուծման համար։ Նրա արևելյան բյուրոն զինվորագրվեց ցարիզմին, իր ձեռքը վերցրեց դեռ պատերազմի նախօրյակին ստեղծված հայ Ազգային բյուրոն և ղեկավար դեր խաղաց կամավորական ջոկատների ստեղծման գործում։ Կուսակցությունը գտնում էր, որ այդ ջոկատների կազմավորումով հայ ժողովուրդը ակտիվ կերպով կմասնակցի պատերազմին և Անտանտի հաղթանակի դեպքում (որը տարակույս չէր հարուցում) նրանից կպա-

[1] «Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов», под ред. проф. М. Г. Нерсисяна, Е., 1966, с. 246.

1 Տե՛ս «Մշակ», 1914, հոկտեմբերի 30, № 245։

2 Նույն տեղը, նոյեմբերի 15, № 259։

հանջի հայկական ինքնավարություն, ընդգրկելով նրա մեջ հայկական վեց վիլայեթներն ու Կիլիկիան։

Հնչակյանները աշխարհամարտի նախօրյակին դատապարտում էին պատերազմն իբրև չարիք և դեմ էին նրա միջոցով միջազգային խնդիրները լուծելու եղանակին, բայց երբ սկսվեց աշխարհամարտը, կանգնեցին պատերազմից հայ ժողովրդի համար բարիք ակնկալողների դիրքերում։ Նրանց ղեկավարներից մեկը՝ Ս. Սապահգյուլյանը, ենթարդրում էր, որ պատերազմում Թուրքիան կպարտվի, և կառաջանան պետական նոր կազմավորումներ։ Անհրաժեշտ է, որ հայերը հետամուտ լինեն ստեղծելու հայկական վեց վիլայեթներից ու Կիլիկիայից ինքնավարություն՝ եոյակ համաձայնության տերությունների կամ նրանցից մեկի հովանավորությամբ։

Պատերազմից բարիքներ էին սպասում նաև հայ մյուս բուրժուական կուսակցություններն ու կազմակերպությունները՝ էսեռները, «սպեցիֆիկները», կադետական շրջանները և այլն։

Ցարական կառավարության նվաճողական քաղաքականությունն ակտիվորեն պաշտպանեցին հայ կապիտալիստները։ Նրանք ընդգրկվեցին Անդրկովկասում ստեղծված ռազմա-արդյունաբերական կոմիտեներում և կատարեցին իշխանությունների հանձնարարությունները, կազմակերպեցին բանակի ռազմական հանդերձավորումն ու պարենավորումը, կոչ արեցին ընակչությանը օժանդակել կառավարությանը՝ նրա «արդարացի»

և «ազատագրական» պատերազմում։ Արևելահայ բուրժուազիան երազում էր տեսնել Արևմտյան Հայաստանը ազատագրված թուրքական տիրապետությունից և ինքնավար սկզբունքով մտած Ռուսաստանի կազմում։ Նա կբավարարվեր նաև, եթե ցարիզմն ուղղակի անեքսիայի ենթարկեր այն, չտալով նույնիսկ ինքնավարություն, որովհետև այս դեպքում ևս հայ կապիտալիստները կունենային տնտեսական գործունեության լայն ասպարեզ և համագործակցելով ռուսական վարչակարգի հետ, կստանային մեծամեծ օգուտներ։

Միայն բոլշևիկյան կուսակցությունն էր, որ մերկացրեց պատերազմի իմպերիալիստական, թալանչիական բնույթը և ցույց տվեց նրա աղետաբեր հետևանքները աշխատավորների համար։ Հայ բոլշևիկները, ղեկավարվելով Վ. Ի. Լենինի դրույթներով, քննադատեցին ազգային կուսակցությունների ցարանպաստ դիրքորոշումը և մատնանշեցին, որ ինչպես աշխարհի այլ երկրներում, այնպես էլ Ռուսաստանում հողային ու ազգային կենսական հարցերի լուծումը կապված է պրոլետարական հեղափոխության հաղթանակի հետ։ Նրանք իրենց գաղափարները հայ աշխատավորության շրջանում պրոպագանդում էին «Պայքար» թերթի և այլ պարբերականների միջոցով։

Բայց բոլշևիկների պրոպագանդան մնաց «ձայն բարբառոյ յանապատի»։ Հայ իրականության մեջ գերիշխող բուրժուական շրջաններն առաջ տարան իրենց ձեռնարկումները և, արձագանքելով ցարական կառավարության կոչին, դի-

մեցին աշխարհի հայությանը հայրենիքի, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման համար կամավորներ ուղարկել՝ ռուսական բանակում Թուրքիայի դեմ կռվելու նպատակով։ Ազգային բյուրոն, որի մեջ թելադրող դեր էր խաղում դաշնակցությունը, Մոսկվայում, Պետրոգրադում, Նոր Նախիջևանում, Բաքվում և այլ քաղաքներում ուներ իր ենթաբաժինները, որոնք ընդունում էին կամավորներին ու ուղարկում Թիֆլիս։ Կամավորները ժամանում էին աշխարհի տարբեր երկրներից, Ռուսաստանի քաղաքներից և շուտով այնքան շատ հավաքվեցին Թիֆլիսում, որ հարկ եղավ նրանց հոսքը դադարեցնել։ Հայ կամավորները զինվորագրվում էին գերազանցապես Ռուսաստանին։ Պատմաբանները նշում են, որ նրանք համալրում էին այդ պետության բանակները ոչ թե նրա զավթողական պլանների իրականացմանը նպաստելու, այլ ռուսների օգնությամբ Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու համար։ Որքան էլ դա ճըշմարիտ էր, սակայն թերևս անհրաժեշտ էր հաշվի առնել արևմտահայության վիճակը և չդիմել այդ քայլին, մանավանդ, երբ Ռուսաստանը կարող էր գրավել Արևմտյան Հայաստանը, առանց հայ կամավորների մասնակցության և նվաճելիս, պիտի ստեղծեր ոչ թե ինքնավար Հայաստան, այլ բնակեցնելու էր այն կոզակներով։ Ցարիզմը միայն օգտագործում էր հայերին, իսկ իրականում կցելու էր Արևմտյան Հայաստանը կայսրության որպես նվաճած տարածություն՝ համարելով այն իբրև կայսրության բաղկացուցիչ մասերից մեկը։ Հայ բուրժուական շրջանները ղեկավարվում էին ավելի շատ իրենց պատրանքներով և ենթադրություններով, քան իրական գործերով։

Համենայնդեպս հայ կամավորներից սկզբում կազմվեցին I, II, III և IV ջոկատները, որոնց հրամանատարներ տարբեր ժամանակներում նշանակվեցին Անդրանիկը (Անդրանիկ Օզանյան), Քեռին (Արշակ Գավաֆյան), Խանասորի Վարդանը (Վարդան Մեհրաբյան), Համազասպը (Համազասպ Սրվանձտյանց) և ուրիշներ։ Ապա ստեղծվեցին կամավորների V, VI, և VII ջոկատները՝ Գրիգոր Ավշարյանի, Հայկ Բժշկյանի (Գայ), Հովսեփ Արղությանի և այլոց հրամանատարությամբ։ Ամենախոշորը Անդրանիկի ջոկատն էր՝ 1200 զինվորներով։ Բոլոր ջոկատներում համախմբված կամավորների թիվը ըստ որոշ հեղինակների հասնում է 6.000-ի, իսկ ըստ այլոց՝ 10.000-ի։ Նրանց ծախսերի մեծ մասը հոգում էր ցարական կառավարությունը։ Սակայն հայերը ևս միջոցներ էին տրամադրում։ Միայն 1915 թ. նրանց հավաքած գումարը կազմում էր 1.444.000 ռուբլի, որի 1.020.000-ը հանգանակել էին Ռուսաստանի տարբեր շրջաններում բնակվող հայերը[1]։

Կամավորական առաջին ջոկատը ռազմաճա-

1 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, Երևան, 1981, էջ 548։

կատ մեկնեց 1914 թ. նոյեմբերի 16-ին, գործելով Սալմաստ—Վան ուղղությամբ՝ գեներալ Ջեռնոզուբովի զորաբաժնում, երկրորդը՝ նոյեմբերի 17-ին՝ Իգդիր—Բայազետ—Բերկրի—Վան, երրորդը՝ նոյեմբերի 1-ին՝ Կաղզվան—Ալաշկերտ—Մանազկերտ—Բիթլիս, չորրորդը՝ նոյեմբերի 19-ին՝ Սարիղամիշ—Քեփրի-քյոյ—Էրզրում ուղղությամբ։ Նրանք արիաբար կռվեցին ռուսական բանակների շարքերում, նպաստելով մի շարք ճակատամարտերում թշնամու դեմ տարած հաղթանակներին։ Առանձնապես աչքի էր ընկնում Անդրանիկի ջոկատը, որի մասին գեներալ Ջեռնոզուբովը հիացմունքով էր արտահայտվում, նշելով, թե այն ակտիվ դեր խաղաց արյունահեղ մարտերում, հատկապես Դիլմանում, փրկելով Կովկասը թուրքական ներխուժումից։ «Ես ի դեմս Անդրանիկի,— գրում էր նա,— միշտ տեսնում էի եռանդուն հայրենասերի, Հայաստանի ազատության համար մարտնչող մարտիկի, ջերմ հայրենասերի»[1]։ Իրենց մարտական առաջադրանքները կատարելու հետ մեկտեղ կամավորները թուրքական կոտորածներից փրկում էին բազմահազար հայերի և ուղարկում Կովկաս։ Հարկ է նշել, որ բացի կամավոր գրվելը հայերը պատերազմող պետությունների կողմից զորակոչվում էին զինվորական ծառայության։ Ըստ պահպանված տվյալների, Ռուսաստանում հայ զորակոչվածների թիվը կազմում էր

[1] **А. О. Арутюнян**, Кавказский фронт, 1914—1917, Е., 1971, с. 310.

շուրջ 250.000, Թուրքիայում՝ 300.000, իսկ Անգլիայում, Ֆրանսիայում և ԱՄՆ-ում՝ 50.000։

Բայց 1915 թ. վերջերին Ռուսաստանը, երկյուղելով, որ հայ կամավորները կդառնան ազգային բանակի հիմք, ցրեց նրանց և միացրեց համառուսական զինվորական ուժերին։ Ռուսական կառավարող ու զինվորական շրջանները բացեիբաց հայտարարում էին, որ հետամտում են իրենց պետության շահերը և ոչ թե հայերի ինքնավարության հաստատումը, որ նրանք պետք է կռվեն ոչ թե ինքնավար Հայաստանի համար, այլ որպես Ռուսաստանի քաղաքացիներ։ 1916 թ. ամռանը ռուսական հրամանատարությունը հայ կամավորներից ստեղծեց հինգ գումարտակ և միացրեց կովկասյան տարբեր զորամիավորումների։ Ցարիզմի այդ քաղաքականությունը դառնացրեց հայ ժողովրդին, հատկապես կամավորներին, որոնցից շատերը լքեցին ռուսական բանակը։

Այլ էր սակայն երիտասարդ թուրքերի քաղաքականությունը։ Օգտագործելով պատերազմի առիթը, նրանք ձեռնամուխ եղան նախօրոք մշակած հայաջինջ ծրագրի իրագործմանը։ Դեռ 1914 թ. նոյեմբերին ռազմաճակատում կրած պարտության մեղքը գցելով հայերի վրա, թուրք դահիճները սրի քաշեցին Արդվինի, իսկ դեկտեմբերին՝ Բաշկալեի հայերին։ Բայց նրանք չհագեցան արյան առվակներով, ձգտում էին առաջացնել արյան գետեր։ Եվ 1915 թ. ապրիլի 15-ին թուրքական կառավարության ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշայի, ռազմական գործե-

րի մինիստր էնվեր փաշայի և իթթիհատի գլխավոր քարտուղար ու լուսավորության մինիստր դ-ր Նազիմի ստորագրությամբ գաղտնի հրաման է ուղարկվում իշխանություններին հայերի տեղահանության ու բնաջնջման վերաբերյալ[1]։ Այդ նպատակին է ծառայեցվում նաև կուսակցության կենտկոմի կողմից մինչ այդ ստեղծված «Հատուկ կազմակերպությունը» («Թեշքիլաթը մահսուսե»), որի մեջ մտնում էին «Միության և առաջադիմության» («Իթթիհատ վե թերաքի») կենտկոմի անդամ Բեհաէդդին Շաքիրը, գլխավոր քարտուղար Նազիմը և հանրակրթական մինիստր Միհդատ Շուքրին։ Դրանցից առաջինը հաստատվում է Էրզրումում, իսկ մյուսները մնում մայրաքաղաքում և գործնականորեն ղեկավարում իթթիհատի հայասպան կուրսը։ Նրանք համալրում են ջարդարար ուժերը ոչ միայն ասկյարներից ու ոստիկաններից, այլև գողերից, ավազակներից, մարդասպաններից ու նման տականքներից, որոնցից շատերին ազատ են արձակում բանտից ու աքսորից։

Շուտով ոճրագործները գործի են անցնում։ Ականավոր պատմաբան Արշակ Ալպոյաճյանը, որ ժամանակակից ու ականատես էր դեպքերին, գրում է. «Առաջին ազդանշանը ու անդրանիկ սարսափը, որ Կ. Պոլսոյ բնակչությունը անակնկալի մը առջև կը դներ, 1915 ապրիլի 11-ի ձերբակալությունները եղան։ Մեկ գիշերուն մեջ Կ. Պոլսոյ մտավորական դասակարգին ամենեն կարկառուն դեմքերը և ժողովուրդին ամեն դասակարգերեն 250 հոգիի չափ անձեր ձերբակալվեցան և Ջանկիրը և Այաշ տարագրվեցան»[1]։ Ձերբակալվածների մեջ էին Գ. Զոհրապը, Դ. Վարուժանը, Սիամանթոն, Ռ. Զարդարյանը, Ռ. Սևակը, Հ. Թլկատինցին, Հրանտը (Մելքոն Կյուրճյան), Երուխանը (Երվանդ Սրմաքեշխանլյան), Ս. Բյուրատը, Տ. Օտյանը (Ասո), Տ. Քելեկյանը, Ե. Շահենը և շատ ուրիշներ։ Նրանք բոլորը հոշոտվեցին Անատոլիայի խորքերում։

Կոստանդնուպոլսից հետո իթթիհատական եղեռնագործները հայ մտավորականներին ձերբակալեցին ու աքսորեցին նաև երկրի այլ քաղաքներում՝ Իզմիրում, Պարտիզակում, Բրուսեում, Ադիաբազարում, Մարզվանում, Էրզրումում, Սվազում, Դիարբեքիրում, Կեսարիայում և այլն։ Նրանց բոլորին նույնպես ոչնչացրին։ 1915 թ. հունիսի 15-ին Կ. Պոլսի սուլթան Բայազետի հրապարակում երիտթուրքերը կախաղան հանեցին հնչակյան կուսակցության 20 ղեկավարների, այդ թվում Փարամազին, Պենեին, Վանիկ Աչքպաշյանին և այլոց, ներկայացնելով նրանց հայրենիքի դավաճանության շինծու մեղադրանքը։ Սրի քաշեցին նաև հազարավոր հայ հոգևորականների,

---

1 Տե՛ս Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965, էջ 244։

1 Արշակ Ալպոյաճեան, Անհետացող դեմքեր, Գրիգոր Զոհրապ (իր կյանքը և իր գործը), Կ. Պոլիս, 1919, էջ 240։

իմանալով, որ նրանք կարևոր դեր են խաղում ազգի համախմբման և թշնամուն դիմագրավելու գործում։ Այդպիսով, միայն մի քանի ամսվա ընթացքում դահիճները ոչնչացրին արևմտահայ հազարավոր բժիշկների, ինժեներների, ուսուցիչների, ճարտարապետների, գրողների, բանաստեղծների, թարգմանիչների, գիտության ու արվեստի աշխատողների, կուսակցական ու հոգևոր գործիչների, այսինքն մտավորականների, որոնք շարունակելով իրենց նախնիների լավագույն ավանդույթները, օգտակար գործ էին կատարում ոչ միայն հայ, այլև Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների համար։

Ապա երիտթուրքերը սկսեցին ոչնչացնել ռազմունակ հայերին, որպեսզի բացառեին կամ թուլացնեին նրանց ինքնապաշտպանությունը։ Նրանք օգտագործեցին զորահավաքը (սեֆերբերլիք) և զինակոչեցին նախ երիտասարդներին, ապա՝ մեծերին։ Զորակոչված հայերի մի մասին ուղարկեցին արևմտյան ռազմաճակատ, քանզի չէին վստահում, որ կռվեին Ռուսաստանի դեմ, իսկ մեծ մասին առաջարկեցին ծառայել սակրավոր գումարտակներում (ամելե-թափուսուներ), հարկադրելով կատարել ամենածանր և կեղտոտ աշխատանքները։ Երիտթուրքական դահիճները զորակոչված հայերից կազմեցին խմբեր, քշեցին երկրի խուլ անկյունները և ամենաբիրտ եղանակներով կոտորեցին։ Եվ հայ «երիտասարդ զինվորները դեռ չկատարած իրենց պարտքը հայրենիքի,

ազգի և ընտանիքի հանդեպ, մահացան առանց իմանալու մահվան պատճառը»[1]։

Այնուհետև իթթիհատական ոճրագործները ձեռնամուխ եղան արևմտահայ խաղաղ ու անպաշտպան բնակչության ջարդերին։ Առաջին հարվածը նրանք հասցրին Կիլիկիայի հայությանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրա աշխարհագրական դիրքը հնարավորություն կտար Անտանտի տերություններին խոցելու Թուրքիային այդ մասից։ Պակաս կարևոր չէր նաև այն փաստը, որ Կիլիկիան, մասնավորապես Զեյթունը, երկար տարիներ հատկանշվել էր իր ազատագրական մաքառումներով և կարող էր լուրջ անհանգստություն պատճառել թուրքերին նաև ներկա պատերազմի ժամանակ։

Երիտթուրքական իշխանությունները 1915 թ. մարտի կեսերից ձեռնամուխ եղան Զեյթունի բռնագաղթին և մինչև մայիս դատարկեցին այն հայերից[2]։ Նրանց մեծ մասին քշեցին դեպի Տեր-Զոր, իսկ մյուսներին դեպի Կոնիա և Էրեյլի, այսինքն՝ դեպի մահ։ Մահապարտներին ուղեկցում էին ժանդարմներն ու ոստիկանները, ենթարկելով նրանց դաժան ծեծի ու բռնությունների։ Ովքեր ընկնում էին ճանապարհին, գավազաններով ու մտրակներով ոտքի էին հանում և հարկադրում

1 Բժ. Իսահակ Տերտերյան, Հայկական գոյամարտը, մեր ցեղի դառնաղետ անցյալի սեղմ պատմությունը, երկերի ժողովածու, վեցերորդ հատոր, Թեհրան, 1957, էջ 233։

2 Տե՛ս Հ. Մ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը 1409—1921 թթ., Երևան, 1969 թ.։

քայլել, իսկ ովքեր չէին կարողանում՝ գնդակահարում կամ սվինահարում էին։ Ոճրագործները կողոպտում էին տարագիրներին, խլելով նրանց զարդերն ու հագուստները։ 1915 թ. ապրիլ-հուլիս ամիսներին թուրքական իշխանությունները տեղահանեցին Ադանայի և Հալեպի վիլայեթների հայերին։

Արևմտյան Հայաստանում թուրք դահիճները հայկական ջարդերը զանգվածաբար շարունակեցին ու ավարտեցին 1915 թ. գարնան ու ամռան ամիսներին։ Կոտորածներն ամենուրեք իրագործում էին տեղահանության պատրվակով, հայտարարելով և հավաստիացնելով, թե այն կատարվում է ռազմական նկատառումներով, թուրքական բանակի թիկունքի ապահովման համար, նույնիսկ խոստանում էին, թե պատերազմի ավարտից հետո բոլորը կվերադառնան լքված գյուղերն ու քաղաքները և կստանան իրենց ունեցվածքը։ Պաշտոնյաներից ոմանք առաջարկում էին հայերին հանձնել իրենց շարժական կայքը, հատկապես գանձերը տեղական իշխանություններին կամ հաստատություններին համոզելով, որ այդպիսով գրանք ավելի ապահով ու հուսալի կպահպանվեն։ Բայց հայերին բնակավայրերից դուրս բերելուն պես տանում էին խորխորատներն ու ձորերը, սարերն ու ամայի վայրերը և դաժանաբար կոտորում։ Վանի վիլայեթում դահիճները 1915 թ. առաջին կեսին սպանեցին բազմահազար հայերի։

Կոտորածներն ավելի սոսկալի էին Բիթլիսի վիլայեթում, ուր իթթիհատական իշխանություն-

ները ոչ այնքան տեղահանեցին, որքան տեղում ջարդեցին հայերին։ 1915 թ. հունիսի 25-ին նրանք սրի քաշեցին Բիթլիսի համարյա ողջ հայ բնակչությանը, իսկ հուլիսի սկզբներին նույն բախտին արժանացան նաև Մուշ քաղաքի հայերը։ Զբավարարվելով դրանով, դահիճները հիմնովին ոչնչացրին դաշտի հայկական գյուղերը։ Միայն քչերին հաջողվեց փրկվել։ Նրանք հայերին քշում էին եկեղեցիներն ու դոմերը և հրդեհելով՝ ողջակիզում կամ ծխախեղդում էին։ 1916 թ. մարտին ռուսական զորամասերը գրավելով Մուշի դաշտը, միայն Աղջան ու Ալիկրան գյուղերում փրկված քների տակից հայտնաբերեցին հազարավոր ածխացած և կիսաածխացած դիակներ, զոհերի մեջ էին բազմաթիվ երեխաներ։ Իսկ Գարնեն գյուղում նրանք գտան թուրքական իշխանությունների կողմից սպանված 5—6 հազար հայ սակրավորների։

Էրզրումի վիլայեթում դահիճները բաժանում էին հարազատներին միմյանցից, անգամ երեխաներին մայրերից և կապկպում 4—5 հոգուց բաղկացած խմբերով, որ չկարողանան փախչել։ Այնուհետև, հեռացնելով իրենց բնակավայրերից, մաս-մաս մորթոտում կամ գնդակահարում էին։ Այդ եղեռնագործությանը մասնակից էին դարձնում նաև քուրդ բարբարոսներին, քանի որ սրանք գործելով սառը զենքով, նպաստում էին փամփուշտի տնտեսմանը։ Թուրք ոճրագործները ողջ մնացածներին տեղահանելով դեպի Արևմուտք,

սպանդը շարունակում էին ճանապարհին, շպըրտելով նրանց դիակները հորդառատ գետերը։ Ականատեսները պատմում են, որ կոտորածների օրերին այնքան դիակ նետվեց Եփրատ, որ դրանք կուտակվելով, տեղ-տեղ փակել էին գետի հունը։

Իշխանությունները խոստանում էին, որ եթե հայերն ընդունեն մահմեդականություն, կփրկվեն ջարդերից։ Հայերը, իհարկե, մերժում էին՝ գերադասելով մահը հավատափոխությունից։ Ոմանք համաձայնվում էին և հրաժարվելով քրիստոնեությունից, փորձում էին մտնել մահմեդական փարախը, սակայն դարձյալ մորթոտվում էին։ Ինչպես հայաբնակ այլ վայրերում, այնպես էլ Էրզրումի վիլայեթում ոճրագործները հափշտակում էին գեղեցիկ հայ կանանց ու աղջիկներին և մահմեդականացնում, դարձնում հարճ կամ իբրև ստրկուհիներ վաճառում։

Խարբերդի վիլայեթում 1915 թ. գարնանը թուրքական իշխանությունները նախ կոտորեցին զորակոչված հայերին, ապա՝ խաղաղ բնակչությանը։ Դահիճները դիմադրողներին դուրս էին բերում բնակարաններից ու բնակավայրերից և բաժանելով խմբերի, քշում դեպի մահ։ Նրանք մահապարտներին տանում էին քարավաններով։ Ճանապարհին այնքան էին ոչնչացնում, որ մինչև տեղ էին հասնում, հազարավոր հայերից մնում էին ալյակներ ու խլյակներ։ Թուրք զինվորներին այստեղ ևս օգնում էին քուրդ հրոսակները, որոնք իշխանությունների խրախուսանքով հարձակվում էին տարաբախտների վրա, սպանում ու թալանում էին՝ տանելով անգամ փալասները։ Իրենց բարբարոսությունները թաքցնելու նպատակով երիտթուրքական պաշտոնյաները չէին թույլատրում օտարերկրացի լրագրողներին այցելել տեղահանվածներին, ուսումնասիրել նրանց դրությունը և ցույց տալ օգնություն։ Այնուամենայնիվ, լրագրողները հաղթահարում էին ոճրագործների պատնեշները և հայերի սարսափելի վիճակի մասին հաղորդում քաղաքակիրթ աշխարհին։ Մարիա Ջեյքբրսոնը գրում էր. «Ես չեմ կրնար բառեր գտնել նկարագրելու համար այս ժողովրդին ցավերը, տառապանքներն ու սարսափները։ Մարդ իրար կանցնի, երբ կլսե անոնց պատահած սոսկալի դեպքերուն մասին։ Կարծես թե սատանեական հնարամտությունները իրենց գագաթնակետին հասած ըլլային, կը ցավցնեն ու կը շարչարեն իրենց դժբախտ զոհերը»[1]։

Դիարբեքիրի վիլայեթում երիտթուրքական իշխանությունները հայերի կոտորածներն սկսեցին 1915 թ. գարնանը և լայնորեն ծավալեցին ամռանը։ Մի շարք տեղերում ոճրագործները սպանվածներին հագցնում էին քրդական շորեր և «ապացուցում» օտարերկրյա լրագրողներին, որ հայերն են կոտորել քրդերին։ Սակայն ողջամիտ մարդիկ, ծանոթանալով իրավիճակին, հասկանում էին կատարված խարդախությունը և ընթերցողին հաղորդում ճշմարտությունը։ Ի դեպ՝ թուրքական պրո-

[1] Մ. Վ. Արզումանյան, Դարավոր գոյամարտ, Երևան, 1989, էջ 389։

պագանդան այսօր էլ օգտագործում է այդ կեղծիքները և ձգտում թյուրիմացության մեջ գցել հասարակայնությանը։

Կոտորածների օրերին հանդիպում էին հիրավի վիպական տեսարաններ։ Ահա դրանցից մեկը. իթթիհատական պաշտոնյա Շեվքեթ բեյը պատմել էր, որ Դիարբեքիրի մերձակայքում, հայերին գնդակահարելիս, հայտնվում է մի քուրդ և խնդրում, որ իրեն տան մահապարտ հայերից մեկի տասնամյա աղջնակին։ Շեվքեթ բեյը կատարում է նրա խնդրանքը և, կանչելով աղջնակին, ասում. «Մենք հանձնում ենք քեզ այս մարդուն, և քո կյանքը կփրկվի»։ Բայց նա պատասխանում է. «Ես հայի աղջիկ եմ, իմ ծնողները և հարազատները գտնվում են նրանց մեջ, որոնց պետք է շուտով սպանեն։ Ես չեմ ուզում ունենալ ուրիշ ծնողներ և չեմ ցանկանում նրանցից նույնիսկ մի ժամ ավել ապրել»։ Ապա Շեվքեթ բեյը նշում էր, որ աղջնակը վազեց իր ծնողների մոտ, հպարտությամբ կանգնեց նրանց կողքին և գնդակահարվեց նրանց հետ միասին։

Սեբաստիայի վիլայեթում թուրքական պաշտոնյաներն ու հոգևորականները նախապես սկսեցին վարել հակահայկական պրոպագանդա, համոզելով մահմեդական բնակիչներին, որ հայերը նրանց ոխերիմ թշնամիներն են, ձգտում են կործանել Թուրքիան ու Շարիաթը։ Իսկ 1915 թ. հունիսին ձեռնամուխ եղան հայերի զանգվածային բռնագաղթին։ Ոճրագործներն այլևս չէին թաքցնում, որ տեղահանման նպատակը բնաջնջումն է։

Հայերից շատերն աղերսում էին, որ խնայեն, փորձում էին ապացուցել իրենց անմեղությունը, բայց իշխանությունները զանց էին առնում այդ ամենը։ Դահիճներն այնպիսի դաժանությամբ էին գործում, որ նրանց զոհերը բախտավորություն էլ համարում, եթե գնդակահարվում էին։ Նրանք կացնահարում էին անգամ երեխաներին կամ ողջ-ողջ շպրտում գետն ու անդունդները։ Բռնագաղթի ճանապարհին շատ հայուհիներ անարգանքից խուսափելու համար ինքնասպան էին լինում։

Տրապիզոնի վիլայեթում հայերի խուզարկությունները ու ձերբակալումները սկսվեցին 1915 թ. ապրիլին։ Բազմաթիվ անմեղ մարդիկ բանտարկվեցին։ Սակայն զանգվածային տեղահանումներն սկսվեցին հունիսին, երբ այդ առթիվ ստացվեց կառավարության հրամանը։ Իր հայատյաց վարքագծով հռչակված Տրապիզոնի կուսակալ Ազիմ փաշան գործի դրեց նահանգի զինվորական ու ոստիկանական ուժերը և ամենադաժան կերպով սկսեց արտաքսել հայերին։ Մի քանի օրվա ընթացքում մահապարտները զրկվեցին բնակարաններից և կոտորվեցին իրենց ծանոթ ու անծանոթ վայրերում։ Ոճրագործները շատերին խեղդեցին ծովում, թալանեցին նրանց շարժական ու անշարժ ունեցվածքը և քանդեցին, ոչնչացրին կուլտուրկրթական հաստատությունները։

Երիտթուրքական իշխանությունները հայերին կոտորեցին նաև Բուրսայի, Նիկոմիդիայի, Էնկյուրիի, Կոնիայի և կայսրության այլ շրջաններ-

ում, ամենուրեք գործադրելով նույն վայրագությունները ու բարբարոսությունները։ Մահապարտներից ոմանք, չդիմանալով նրանց բռնություններին, ինքնասպան էին լինում, նետվելով անդունդները կամ հորդառատ գետերը։

Զանգվածային ջարդերից զերծ մնացին միայն Կոստանդնուպոլիսն ու Զմյուռնիան, ուր դահիճները, քաշվելով մեծ տերությունների ներկայացուցիչներից, չիրագործեցին իրենց հայակեր ծրագիրը։

Երիտթուրքերը տեղահանված հայերի մի մասին աշխատեցնում էին Բեուլին—Բաղդատ երկաթգծի շինարարության վրա, բայց մեծ մասին քշում էին դեպի Միջագետքի անապատները։ Նրանց կարգադրությամբ մահապարտների քարավանները շարժվում էին գիշեր ու ցերեկ, տաքին ու ցրտին, արևին ու անձրևին։ Նրանք քայլում էին ժանդարմների և ասկյարների հսկողության ու հարվածների տակ։ Նրանք այնպես էին փոշոտվում ու կեղտոտվում, որ կորցնում էին մարդկային կերպարանքը, այնպես էին հյուծվում ու նիհարում, որ չէին կարողանում ոտքի կանգնել։ Բայց պիտի քայլեին, այլապես գնդակահարվում կամ սվինահարվում էին։ Իշխանությունները կըտրականապես արգելել էին մահմեդականներին օգնել տարաբախտներին։ Այդ կարգադրությանը չենթարկվողները համարվում էին հայրենիքի դավաճաններ և խստորեն պատժվում։

Եվ մահապարտները շարժվում էին, թողնելով իրենց ետևից հազարավոր ու տասնյակ հազարավոր դիակներ, որոնք կեր էին դառնում գայլերին ու բորենիներին, շներին ու անգղներին։ Հաճախ բազմահազար քարավաններից մնում էին բեկորներ։ Այսպես. Խարբերդից, Ակնից, Թոքատից և Սեբաստիայից դուրս եկած 18.000 հայերից միայն 350-ը հասավ Հալեպ, իսկ Էրզրումից տեղահանված 19.000 հայերից ողջ մնացին 11-ը[1]։ Այդ բեկորներն էլ դահիճները պահում էին, որ ցույց տային համաշխարհային հասարակայնության ներկայացուցիչներին, թե իբր կատարում են արևմտահայության տեղափոխություն։ Եվ այդ բեկորները միավորելով, կազմում էին նոր քարավաններ։ Մահապարտների համարձակության, հանդգնության կամ փախուստի փորձերը անմիջապես նկատվում էին բիրտ ու աչալուրջ ասկյարների կողմից և դաժանորեն պատժվում։

Մինչև 1915 թ. վերջերը և 1916 թ. սկզբները երիտթուրքական իշխանությունները հայաթափեցին Արևմտյան Հայաստանը, հայերին ենթարկելով բոլոր ժամանակների տանջանքներին ու կտտանքներին և մեռցնելով բոլոր ժամանակների մահերով։

Շուտով Բեհաէդդին Շաքիր բեյը հեռագրեց Էրզրումից Անթալիայի մութասարիֆին. «Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Սիվասի, Տրապիզոնի շրջաններում ոչ մի հայ չի մնացել, բոլորը արտաքսվել են Մոսուլի և Տեր-Զորի կողմերը»[2]։

[1] Տե՛ս «Геноцид армян...», էջ 445—446:

[2] «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», Երևան, 1988, էջ 47։

նույնն էին հաստատում նաև ռուսական դիվանագիտական ծառայողները, որոնք 1916 թ. մայիսին, հենվելով Մանդելշտամի տեղեկությունների վրա, Բեռնից հաղորդում էին Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովին, որ «Փոքր Ասիայում հայեր համարյա չկան, նրանք կամ բնաջնջված են, կամ աքսորված և միայն մնացուկներ են թաքնվել ղզլբաշների մոտ»[1]։

Մահապարտների բազմահազար քարավանները ճանապարհին կոտորվելով ու նոսրանալով, ի վերջո, հասնում էին Միջագետքի անապատները։ Գերմանացի հումանիստ գրող ու հրապարակախոս Արմին Վեգները, որ 1915—1916 թթ ծառայում էր Միջագետքում տեղավորված գերմանական բանակում և ականատես է եղել հայերի բնաջնջմանը, գրում է, որ Սիբիրը, իբրև աքսորավայր, ընդունված է համարել երկրագնդի ամենաանհյուրընկալ վայրերից։ Բայց Միջագետքի անապատների համեմատությամբ Սիբիրը փառք է, քանի որ ունի առողջ կլիմա, բարեբեր հողեր, զուլալ ջրեր, ապրելու տանելի պայմաններ։ Մինչդեռ Միջագետքի անապատները զուրկ են խմելու ջրից, բուսական ու կենդանական աշխարհից։ Ամռանն այստեղ խաշում է կիզիչ արևը, աշնանը հեղեղում են տեղատարափ անձրևները, իսկ ձմռանը վրա են տալիս սարսափելի սառնամանիքները։ Ջարդարարները հայերին քշում էին ահա այդ վայրերը, ամենամահաբեր անապատը՝ Դեյր-էլ-Զոր (կամ ինչպես աղավաղված ասում են՝ Տեր-Զոր), առանց հացի ու ջրի, առանց հագուստի՝ ոչնչացնելու նպատակով։

Երբ մահապարտները հավաքվեցին Դեյր-էլ-Զորում, Թալեաթ փաշան կարգադրեց. «Հասավ աքսորի վերջը։ Այժմ գործեք համաձայն նախկին հրամանների, և դա արեք որքան հնարավոր է արագ»[1]։ Եվ դահիճներն սկսեցին սրատել, գլխատել, գնդակահարել իրենց զոհերին։ Բայց տեսնելով, որ կարճ ժամանակամիջոցում անզոր են ոչնչացնել բոլորին, նրանց մատնեցին սովի։ Քչերն ազատվեցին մահվան ճիրաններից։

Անշուշտ, արևմտահայության ցեղասպանությունը կազմակերպեցին երիտթուրքական ղեկավարները։ Բայց նրանց օգնեցին, նրանց հրահանգները կենսագործեցին նաև թուրք ու քուրդ աղաները, բեյերը, ցեղապետերը, մահմեդական հոգևորականները և սրանց ձեռքերին կույր գործիք դարձած ֆանատիկ խուժանը։ Եղան պաշտոնյաներ, որոնք դեմ կանգնեցին իթթիհատականների հայաջինջ քաղաքականությանը։ Հալեպի կուսակալ Ջելալ բեյը, երբ ստացավ Թալեաթի հրահանգը հայերին կոտորելու մասին, հայտարարեց. «Ես այս նահանգին վալին եմ. չեմ կրնար անոր դահիճը ըլլալ»[2]։ Ջելալ բեյին, իհարկե, անմիջապես պաշտոնազրկեցին և նրա փոխարեն նշանակեցին հլու ոճրագործի։ Եղան նաև մահմեդական

[1] «Геноцид армян...», էջ 371:

[1] «Геноцид армян...», էջ 431:

[2] Ա. Շիրակյան, «Կտակն էր նահատակներուն», 1965, Պեյրութ, էջ 42։

հասարակ քաղաքացիներ ու գյուղացիներ, որոնք վտանգելով իրենց կյանքը, փրկեցին առանձին հայերի։ Ցավոք, այդպիսիները քիչ էին։ Եվ չէին կարող շատ լինել, որովհետև իշխանությունները, ինչպես ասվեց, խստորեն պատժում էին նրանց։

Իթթիհատական ոճրագործներն առաջին աշխարհամարտի տարիներին Թուրքիայում եղած ավելի քան 2.500 հազար հայից կոտորեցին շուրջ 1,5 միլիոնը, մնացածները մի կերպ փրկվեցին՝ ցրվելով Ասիայի, Աֆրիկայի, Եվրոպայի և Ամերիկայի տարբեր երկրներ։ 1915 թ. օգոստոսի 31-ին Թալեաթ փաշան հայտարարեց, որ ինքն ու իր գործընկերները հայկական հարցը լուծեցին երեք ամսում, ինչը սուլթան Աբդուլ Համիդ II-ին չէր հաջողվում երեսուն տարվա ընթացքում։ Այս լկտի հայտարարությունը, ցավոք, ճշմարիտ էր։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ամբողջ աշխարհում հաշվվում էր 4,5—5 միլիոն հայ։ Եթե նկատի ունենանք, որ պատերազմի տարիներին թուրքական հորդաներն Անդրկովկաս ներխուժելիս սրի քաշեցին նաև արևելահայության մի մասին, որ բազմաթիվ հայեր զոհվեցին պատերազմող այլ տերությունների բանակներում և ռազմաճակատներում, պիտի ընդունել, որ հայերի կորուստները կազմեցին մոտ երկու միլիոն։ Ահա այդ անմեղ ժողովուրդը կորցրեց իր ընդհանուր թվաքանակի ավելի քան 40 տոկոսը, մինչդեռ պատերազմի հանցագործ պետությունները (Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը և այլն)՝ 1—8 տոկոսը։ Մարդկային կորուստների հետ միասին հայ ժողովուրդը կրեց նաև նյութական մեծ վնասներ։ Պատերազմի տարիներին արևմտահայերի վնասները կազմեցին 14.598.460 հազար, իսկ արևելահայերինը՝ 4.532.472 հազար, ընդամենը՝ 19.130.932 հազար ֆրանկ[1]։ Այդ ամենը հափշտակեցին թուրք բարբարոսները և նրանց աջակցող քուրդ ոճրագործները։ Հայ ժողովուրդն ունեցավ նաև մշակութային անդառնալի կորուստներ. ավերվեցին ճարտարապետական մեծարժեք հուշարձաններ, ոչնչացվեցին ձեռագրերը, քանդվեցին դպրոցները, ակումբները, գրադարանները և այլն։ Բայց որ ամենակարևորն է՝ հայ ժողովուրդը զրկվեց իր հայրենիքի մեծ մասից։ Նրա ձեռքում մնաց իր դարավոր բնօրրանի մոտ 10 տոկոսը։

Դեռ չէր ավարտվել առաջին համաշխարհային պատերազմը, երբ երիտթուրքերի պարագլուխները, զգալով իրենց պարտությունը, լքեցին իշխանությունը, իսկ երբ 1918 թ. հոկտեմբերի 30-ին Թուրքիայի նոր կառավարությունը Անտանտի տերությունների հետ կնքեց Մուդրոսի պայմանագիրը, նրանք, վերցնելով կուսակցության գանձարկղը և պետական թանկարժեք իրերը, գողունի փախան երկրից։ Թալեաթ, Էնվեր, Ջեմալ փաշաները, Բեհաէդդին Շաքիր բեյը ու Ջեմալ Ազմը հաստատվեցին Բեռլինում և թաքնվեցին ուրիշների անվան տակ, Թուրքիայի կառավարու-

[1] Տե՛ս «1914—1965, Հուշամատյան մեծ եղեռնի», հրատարակչություն «Զարթոնք», Պեյրութ, 1965, էջ 1028։

թյան վարչապետ Սայիդ Հալիմը մեկնեց Հռոմ... Նրանք գրեցին հիշողություններ, փորձելով արդարանալ և իրենց ոճրագործությունների մեղքը բարդել հենց արևմտահայերի ու Ռուսաստանի վրա։ Նրանք նշում էին, որ իբր իրենք ձեռնարկել են արևմտահայերի ոչ թե ջարդ, այլ տեղափոխություն և դիմել են այդ քայլին հարկադրաբար, քանզի հայերը Թուրքիային նվիրված չեն եղել, ընդհակառակը՝ գործել են Թուրքիայի դեմ, պաշտպանելով Ռուսաստանին և այդպիսով իթթիհատի թիկունքում առաջացրել են սպառնալիք ու խուճապ։

Նախ՝ ի՞նչ նվիրվածություն էին սպասում թուրք դահիճները հայերից, երբ խաղաղ պայմաններում ճնշում ու լլկում, կեղեքում ու հարբստահարում, անարգում ու պատվազրկում էին, վիրավորում ու խոշտանգում, կոտորում ու բնաջնջում էին նրանց։ Այդուհանդերձ, արևմտահայերն արձագանքեցին իթթիհատի զորակոչին և իբրև օսմանյան երկրի քաղաքացիներ ծառայեցին Թուրքական բանակում։ Կ. Պոլսի պատրիարքը պատգամավոր ուղարկեց արևելահայերի մոտ, առաջարկելով՝ հանդես չգալ Թուրքերի դեմ։ Իր նվիրվածությունն իթթիհատի ղեկավարներին ապացուցելու նպատակով նա նույնիսկ պատրաստակամություն հայտնեց արտագաղթել նրանց հետ մայրաքաղաքից, եթե նման անհրաժեշտություն ծագի։ Սակայն ոչինչ չէր կարող կանխել հայաջինջ ոճիրը։

Կամավորական շարժումն սկզբնավորվեց արևելահայերի շրջանում, Ռուսաստանին զինվորագրվեց վեց, թե տասը հազար մարդ։ Որքան էլ նրանք կռվեին անձնուրաց, չէին կարող հաղթանակ բերել Ռուսաստանին կամ պարտության ենթարկել Թուրքիային։ Չէ՞ որ հակառակորդ երկրներն ունեին հարյուր հազարավոր սպառազեն զինվորներ։ Նրանք էին վճռելու պատերազմի ելքը։ Բայց հայտնի է, որ ցարական կառավարությունը, վախենալով, թե հայ կամավորները կդառնան ազգային բանակի հիմք, զորքերը վերակազմելու պատրվակով 1915 թ. վերջերին, ինչպես արդեն ասվեց, ցրեց նրանց իր բանակային միավորումների վրա։ Չնայած դրան, երիտթուրքերը շարունակեցին իրենց հայակուլ քաղաքականությունը, ինչը մի անգամ ևս ապացուցում է, որ իթթիհատի պարագլուխները կոտորում էին հայերին ոչ թե նրանց «դավաճանության», այլ իրենց համաթուրքական պլանների կենսագործման համար։

Երիտթուրքական եղեռնագործները չէին կարող իրագործել իրենց հայակեր քաղաքականությունը, եթե մեծ տերությունները նպաստավոր վարքագիծ չցուցաբերեին նրանց նկատմամբ։ Բանն այն է, որ տասնամյակներ շարունակ արևմտահայերին օգնություն խոստացող Անգլիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը վճռականորեն չբռնեցին ջարդարարների ձեռքը։ Նրանք բավարարվեցին միայն նոտաներ հղելով և մշուշոտ հայտարարություններով։ Ենթադրելով, որ Թուրքիայի

ջախջախումն արդեն փաստ է, այդ տերությունները 1916 թ. գծեցին նրա մասնատման պլանը, անտեսելով հայերին և հաշվի չնստելով նրանց զոհողությունների հետ։

Թուրքիայի դաշնակից կայսերական Գերմանիան բացահայտորեն պաշտպանեց նրա հայաջինջ քաղաքականությունը, համարելով հայերին իր թշնամի Ռուսաստանի գործակալները։ Պատահական չէ, որ երբ արևմտահայերը, փորձելով փրկվել թուրքական յաթաղանից, դիմում էին Օսմանյան կայսրության քաղաքներում ու բանակներում գտնվող գերմանացիներին և իբրև քրիստոնյա օգնություն խնդրում, նրանք ոչ միայն հրաժարվում էին, այլև լկտիաբար հայտարարում, որ թուրքերը ճիշտ են վարվում, և որ հայերի ջարդերը արդար են ու տրամաբանական։ Ավելին՝ որոշ տեղերում գերմանական սպաները մասնակցում էին կոտորածներին և թալանում զոհերին։

Բայց հակառակ իմպերիալիստական տերությունների գիշատիչ ու շահամոլ քաղաքականության, համաշխարհային առաջադեմ հասարակայնությունը կանգնեց հայ ժողովրդի պաշտպանության դիրքերում, պահանջելով արգելել երիտթուրքերի հայաջինջ գործունեությունը և պատժել ցեղասպանության կազմակերպիչներին։ Ֆրանսիացի մեծ հումանիստ Անատոլ Ֆրանսը Փարիզում 1916 թ. ապրիլին դիմեց իր հայրենակիցներին՝ հայերին փրկելու կոչով։ Նա հույս էր հայտնում,

որ Հայաստանը կվերածնվի։ «Այն ժողովուրդը, որ չի ուզում մեռնել, երբեք չի մեռնի»։

Գերմանացի հոգևորական, «Գերմանա-հայկական ընկերության» նախագահ Իոաննես Լեփսիուսը, որ երկար տարիներ ուսումնասիրում էր արևմտահայերի դրությունը Թուրքիայում, պատերազմի տարիներին հրապարակեց բազմաթիվ փաստաթղթեր և ցույց տվեց, որ թուրք կառավարիչները նրանց ցեղասպանությունը նախապատրաստում էին դեռ պատերազմից առաջ և վեր հանեց կայսերական Գերմանիայի մեղսագործությունը այդ գործում։ Մեծ էր նաև գերմանական ժողովրդի մի այլ զավակի՝ Արմին Վեգների կարեկցանքը հայերի հանդեպ։ 1915 թ. Միջագետքում նա բազմաթիվ նկարահանումներ կատարեց հայկական կոտորածների մասին և հրապարակեց դրանք եվրոպական մամուլում։ Արմին Վեգները հայտարարում էր, որ «աշխարհում ոչ մի ժողովուրդ անարդարացի կերպով այնքան չի տառապել, որքան հայ ազգը»։ Ապա պահանջում էր տերություններից անշահախնդրորեն ձեռք մեկնել հայերին և լուծել նրանց կենսական հարցերը, մանավանդ, երբ «մեր առջև կանգնած է բարձր քաղաքակրթության հասած մի ժողովուրդ, որի ծառայություններն արվեստին, գրականությանն ու գիտությանը երբեք չեն կարող մոռացվել, մի ազգ, որ տվել է բազմաթիվ երևելի ու մտածող մարդիկ»[1]։

---

[1] «Պատմա-բանասիրական հանդես», 1986, № 3, էջ 7։

Անգլիացի հրապարակախոս Բրայսը 1915 թ. հոկտեմբերին Լոնդոնի հայանպաստ միտինգում խարազանեց իթթիհատի պարագլուխներին, ցույց տալով, որ նրանք ավարտին են հասցնում սուլթան Համիդի հայաջինջ քաղաքականությունը։ Երիտթուրքերն անողոքաբար ոչնչացնում են նյութական և հոգևոր մշակութային բարձր արժանիքներով օժտված մի ժողովրդի։ Նա հանգամանորեն մերկացրեց այն մեղադրանքները, որոնք թուրք կառավարիչները ներկայացնում էին հայերին՝ արդարացնելով իրենց ոճրագործությունները։ Ապա պահանջեց անհապաղ դադարեցնել չարագործությունները։

Ռուս առաջադեմ մտավորականությունը կանգնեց բնաջնջվող հայ ժողովրդի պաշտպանության դիրքերում և խստորեն դատապարտեց իթթիհատականների վանդալիզմը։ Հռչակավոր գրողներ ու հրապարակախոսներ Մ. Գորկին, Վ. Բրյուսովը, Յու. Վեսելովսկին, Ս. Գորոդեցկին և ուրիշներ հանդես եկան հոդվածներով, որոնցում շեշտեցին հայոց ստեղծած նյութական ու հոգևոր արժեքները և ընդգծեցին դրանց դերը Օսմանյան կայսրության պատմության մեջ։ Վ. Բրյուսովը գտնում էր, որ ամենևին էլ ֆանտաստիկ չէ, երբ ասում են, թե երիտթուրքերը կոտորել են մեկ միլիոնից ավելի, նույնիսկ 2 միլիոն հայեր։ Ոչ մի կերպ չի կարելի արդարացնել նրանց այդ եղեռնագործությունը։ Նա պահանջում էր արդարացի լուծել հայկական հողերի հարցը, հույս հայտնում, որ հայ ժողովուրդը կվերածնվի ու կկերտի իր մեծ ապագան։

Երիտթուրքերի ոճրագործությունները դատապարտեցին նաև բոլշևիկները։ Ս. Մ. Կիրովը 1916 թ. «Թերեք» թերթում հրապարակած իր «Տառապող ժողովուրդը» հոդվածում մերկացրեց թուրքական ոճրագործությունները հայերի նկատմամբ և մատնանշեց, որ երբ Թուրքիայում ցամաքեն նրանց արյան գետերը, հանդես կգան նոր դանտեներ, որոնք կվերարտադրեն միլիոնավոր մարդկանց սարսափելի տանջանքների պատկերները։ Նա խնդիր էր դնում օգնելու կոտորածներից մազապուրծ և Հյուսիսային Կովկասում ապաստան գտած դժբախտ հայերին, որոնք խոցոտված ու թալանված՝ թափառում են մեր երկրամասում, փնտրելով ուտելիք ու հանգիստ։ «Մենք պետք է ընդունենք նրանց ու ջերմացնենք»։

Պատմությունը պարգում է ճշմարտությունը և պատժում հանցագործներին։

1919 թ. փետրվարին Թուրքիայի նոր կառավարությունն իր դիրքերն ամրապնդելու և երիտթուրքական ղեկավարներին լիակատար հեղինակազրկելու ու վարկաբեկելու համար Կ. Պոլսում կազմակերպեց նրանց դատավարությունը, ներկայացնելով հայրենիքի դավաճանության և հայերի զանգվածային ջարդեր կազմակերպելու մեղադրանքներ։ Դատը վարում էր զինվորական տրիբունալը՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազիմ փաշայի նախագահությամբ։ 1919 թ. հուլիսի 6-ին դատարանն ավարտեց իր աշխատանքները և որո-

շեց Թուրքիայի կառավարության նախկին վարչապետ Սաիդ Հալիմին, ներքին գործերի մինիստր Թալեաթին, ռազմական գործերի մինիստր Էնվերին, ծովային մինիստր Ջեմալին, իթթիհատի գլխավոր քարտուղար և լուսավորության մինիստրը Նազիմին, երիտթուրքական կենտկոմի անդամ, «թեշքիլաթը մահսուսեի» նախագահ Բեհաէդդին Շաքիր բեյին, հանրակրթական մինիստր Միդհատ Շուքրի բեյին, Տրապիզոնի վիլայեթի կուսակալ Ջեմալ Ազմին և մյուսներին հեռակա կարգով ենթարկել մահապատժի, իսկ մնացած եղեռնագործներին՝ տարբեր ժամկետներով բանտարկության։

Հանցագործները որքան էլ ձգտում էին թաքնվել, այնուամենայնիվ, հայ ժողովրդական վրիժառուները գտան նրանց և արժանին հատուցեցին։ 1921 թ. մարտի 15-ին Բեռլինում Սողոմոն Թեհլերյանը սպանեց Թալեաթին, նույն թվականի դեկտեմբերի 6-ին Հռոմում Արշավիր Շիրակյանը՝ Սաիդ Հալիմին, 1922 թ. ապրիլի 17-ին Բեռլինում Արամ Երկանյանը և Արշավիր Շիրակյանը՝ Բեհաէդդին Շաքիրին և Ջեմալ Ազմին, 1922 թ. հուլիսի 25-ին Թիֆլիսում Պետրոս Տեր-Պողոսյանը և Արտաշես Գևորգյանը՝ Ջեմալին։ Էնվերը կարողացավ ծլկել Բեռլինից Միջին Ասիա և, անցնելով բասմաչների գլուխ, փորձեց իրագործել իր պանթուրանական ցնորամիտ երազանքները, բայց 1921 թ. պարտություն կրելով խորհրդային բանակի դեմ վարած կռիվներում, Աֆղանստան փախչելու ճանապարհին ընկավ

կարմիր զինվորների գնդակից։ Նազիմը կախաղան հանվեց իր հայրենիքում, 1926 թ.։ Այդպիսին էր երիտթուրքական բախտախնդիրների վախճանը, որոնք, բնաջնջելով արևմտահայությանը, ոչ միայն փառք ու պատիվ չբերեցին իրենց երկրին, այլև սոսկալի ու խայտառակության անջնջելի դրոշմ դրեցին նրա վրա։

* * *

Իթթիհատի կողմից կազմակերպած կոտորածներն արևմտահայերի մեծամասնության համար անսպասելի էին։ Ուստի նրանք չկարողացան դիմագրավել դահիճներին ու սրի քաշվեցին։ Բայց մի շարք վայրերում նրանք արագորեն համախմբվեցին և դիմեցին ինքնապաշտպանության։ Այսպես, օրինակ, Վասպուրականի կամ Վանի վիլայեթի Շատախ, Գավաշ, Թիմար, Հայոց ձոր, Արճեշ գավառակների բնակիչները 1915 թ. մարտին թեժ կռիվներ մղեցին թուրքական զորամասերի ու քրդական բաշիբոզուկների դեմ և պահպանեցին իրենց գոյությունը։ Բայց նրանք, ի վերջո, տեղի տվեցին թշնամու գերազանց ուժերի առաջ և հարկադրված եղան նահանջել դեպի Վան[1]։

Վասպուրականի հայոց ամենանշանավոր ինքնապաշտպանությունը տեղի ունեցավ Վանում,

[1] Տե՛ս Հ. Մ. Մուրադյան, Էջեր հայ ժողովրդի հերոսական անցյալից, Երևան, 1983, էջ 6—92։

որը կազմեց մեր ժողովրդի պատմության փայլուն էջերից մեկը։ Առաջին աշխարհամարտի նախօրյակին Վանն ուներ մոտ 41 հազար բնակիչ, որից 23 հազարը՝ հայ, իսկ 18 հազարը՝ գերազանցապես թուրք։ Քաղաքը բաժանված էր երկու մասի. մեկը կոչվում էր Այգեստան, իսկ մյուսը՝ Քաղաքամեջ։ Այգեստանում բնակվում էր 20 հազար, իսկ Քաղաքամիջում՝ 3000 հայ։ Ընդհանուր բնակչությունը Այգեստանում կազմում էր 37 հազար, Քաղաքամիջում՝ 4 հազար մարդ։ Երկու թաղամասերն իրարից հեռու էին 5—6 կմ։ Նրանց մեջտեղում բնակվում էին թուրքեր։ Վանի բնակիչներն զբաղվում էին հիմնականում արհեստներով ու առևտրով և իրենց գործվածքներն ու շինվածքները վաճառքի էին ուղարկում Թուրքիայի ու Ռուսաստանի զանազան վայրերը։

Երիտթուրքերը դեռ 1914 թ. օգոստոսի վերջերին Վանի կուսակալի պաշտոնում նշանակեցին հայերի նկատմամբ իր դաժանություններով հռչակված Ջևդեթ բեյին։ Անցնելով իր պարտականությունների կատարմանը, նա բանտից ազատեց բոլոր ավազակներին, գողերին, մարդասպաններին և նրանցով համալրեց զորամասերի ու ոստիկանների շարքերը, ապա ոտքի հանեց համիդիեական գնդերը և զինեց մահմեդական խաժամուժին, բոլոր այդ սև ուժերն ուղղելով հայերի դեմ։ Միաժամանակ զինաթափեց հայ զինվորներին, առաջարկելով աշխատել շինարարական զանազան կառույցներում։ Ջբավարարվելով դրանով, նոր կուսակալը պահանջեց հայերից զինակոչիկներ, նպատակ ունենալով նրանց զրկել մարտական ուժերից և հեշտացնել բնաջնջումը։ 1914 թ. վերջերին ու հատկապես 1915 թ. սկզբներին Ջևդեթ բեյն արդեն իրագործում էր հայկական կոտորածներ։ Հետապնդելով Շատախի, Գավաշի, Թիմարի և այլ շրջանների նահանջող հայ գյուղացիներին, կուսակալը շարժվեց Վան և այնպես պաշարեց Այգեստանը, որ «թռչունն անգամ չէր կրնար անցնիլ...»։

Վանի հայ հոգևոր ու կուսակցական շրջանները, տեսնելով նրա հակահայկական վարքագիծը, փորձեցին մեղմել այն։ 1915 թ. փետրվարի 14-ին օսմանյան պառլամենտի դեպուտատ Վռամյանը (Մ. Օ. Դերձակյան) դիմեց ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշային, առաջարկելով Վասպուրականում վերջ դնել հայերի բռնություններին։ Բայց Ջևդեթ բեյը, ամենայն հավանականությամբ, խրախուսվելով Թալեաթ փաշայի կողմից, ավելի սաստկացրեց հայերի հալածանքները։ Նա պահանջեց, որ Վանի 18—45 տարեկան տղամարդիկ ներկայանան զինվորական ծառայության, որպես ամրաշեն աշխատելով թուրքական բանակում։ Հայ երևելիները պատասխանեցին, որ հայերը պատրաստ են բանակում ծառայելու որպես զինվորներ։ Ջևդեթ բեյը մերժեց նրանց այդ պահանջը։ Երևելիներն առաջարկեցին ամեն մի զորակոչվածի ծառայության փոխարեն, ինչպես սահմանված էր օրենքով, կառավարությանը վճարել 43 ոսկի։ Կուսակալն այդ էլ մերժեց։ Այնուհետև հայերն առաջարկեցին, որ զորակոչվածները ներ-

կայանան ոչ թե բոլորը միաժամանակ, այլ մասմաս՝ ամեն անգամ 500 հոգի։ Նրանք մտածում էին, որ եթե առաջինները կոտորվեն, մյուսները թերևս փրկվեն։ Ջևդեթ բեյը համաձայնվեց, պայմանով, որ զորակոչը կատարվի շաբաթը մեկ, և հարցը լուծվի երկու ամսում։ Նա մտադրվել էր գլխատել Վանի հայությանը՝ ոչնչացնելով նախ նրա ղեկավար ուժերին։ Ուստի առաջարկեց դաշնակցության տեղի ներկայացուցիչներից մեկին՝ Իշխանին (Նիկողայոս Պողոսյան) մեկնել Շատախ և կարգուկանոն հաստատել կոտորածների պատճառով քուրդ աղաների դեմ ըմբոստացած հայերի շրջանում։ 1915 թ. ապրիլի 3-ին Իշխանը մեկնեց, բայց Հիրճ գյուղում Ջևդեթի գործակալների կողմից նենգաբար սպանվեց իր երեք զինակիցների հետ միասին։ Ապրիլի 4-ին կուսակալը պահանջեց, որ դաշնակցության մյուս ղեկավարները՝ Արամ Մանուկյանը (Սարգիս Հովհաննիսյան) և Վռամյանը, ներկայանան իրեն։ Վռամյանը կատարեց նրա պահանջը և առաջադրանք ստացավ մեկնել մայրաքաղաք, բայց Բիթլիս—Դիարբեքիր ճանապարհին Բաթման-սու կամուրջի վրա Ջևդեթ բեյի գործակալները սպանեցին նրան և նետեցին գետը։ Կուսակալը ձգտում է ձեռք գցել նաև Արամին և համառորեն հրավիրում է իր մոտ։ Սակայն հասկանալով նրա նենգ նպատակը, Արամը մերժում է հրավերը։

Ապրիլի 5-ին Ջևդեթ բեյը սպառնում է վանեցիներին, որ Այգեստանի քարը քարի վրա չի թողնի, եթե 24 ժամվա ընթացքում իրեն չներկայանան 18—43 տարեկան բոլոր հայ տղամարդիկ։ Միաժամանակ փորձում է մի ջոկատ տեղավորել Այգեստանում՝ իբր ամերիկյան քաղաքացիների պաշտպանության համար։ Հայերը կտրականապես մերժում են նրա պահանջները և հայտարարում, որ կսպանեն առաջին իսկ զինվորին։ Այնուամենայնիվ, Ջևդեթ բեյը Այգեստանի Համուտ աղայի զորանոցում կարողանում է տեղավորել 160 չերքեզ-զինվոր։

Վանեցիների համար հարցն արդեն պարզ էր. կամ պետք է կատարեին կուսակալի կարգադրություններն ու բնաջնջվեին, կամ պայքարի դուրս գային նրա դեմ ու պահպանեին իրենց գոյությունը։ Նրանք ընտրեցին վերջին տարբերակը։ Արամը ձեռնամուխ եղավ ինքնապաշտպանության կազմակերպմանը։ Ապրիլի 4-ին նա հրավիրեց կուսակցական ու անկուսակցական շրջանների ներկայացուցիչների խորհրդակցություն և առաջարկեց՝ դիմագրավել թշնամուն համատեղ պայքարով։ Նրա առաջարկությունն ընդունվեց միաձայն։ Ապրիլի 5-ին կազմվեց «Վասպուրականի հայ ինքնապաշտպանության զինվորական մարմին», որի մեջ մտան Արմենակ Եկարյանը և Գաբրիել Սեմիրջյանը (ռամկավարներից), Բուլղարացի Գրիգորը և Կայծակ Առաքելը (դաշնակցականներից), Հրանտ Գալիկյանը (հնչակյաններից) և Փանոս Թերլեմեզյանը (անկուսակցականներից կամ չեզոքներից)։ Արամը թեև չէր մտնում Զին-

վորական մարմնի մեջ, բայց ղեկավարում էր նրա աշխատանքները։ Այդ մարմնին կից շուտով ստեղծվեցին ենթակա ստորաբաժանումներ՝ Տեղեկատու դիվանը, Հաշվառման խումբը, Զինաբաշխ մարմինը, Հայթայթիչ, Պարենավորման, Ամրաշեն բանվորների, Կարմիր խաչի, Զենքի մթերման ու մատակարարման խմբերը, Վասպուրականի հայ կանանց միությունը, Ոստիկանական վարչությունը, Դատարանը և այլն։

Թշնամու դեմ պայքարի դուրս եկավ Վանի ամբողջ հայությունը՝ ծերերն ու երիտասարդները, պատանիներն ու երեխաները, տղամարդիկ ու կանայք, ձեռնարկատերերն ու բանվորները, արհեստավորներն ու առևտրականները, մտավորականներն ու պաշտոնյաները։ «Վանի հայությունը,— գրում է Փ. Թերլեմեզյանը,— համոզվեց, որ թուրք կառավարությունը վճռել է ամբողջովին բնաջնջել մեր ցեղը։ Ուրեմն կռվելն անխուսափելի դարձավ»։ Նա որոշեց կռվել, գիտակցելով, որ «հերոսական կյանքը թե պատվավոր է և թե պարտավորիչ է»։ Վանեցիները հանդես եկան «գեղ կանգնի, գերան կկոտրվի» սկզբունքով, որի շնորհիվ հերոսամարտը դարձավ «բացարձակ ժողովրդական պատերազմ»։ Այն «այս ու այն կուսակցությանց և անհատներու վերագրելը հիմնովին թյուրիմացություն մ' է. ամենքն իրենց բաժին աշխատանքն ունեցան և ուս ուսի կռվեցան։ Պատիվ այդ անընկճելի ժողովրդյան, որ հայի

պատիվն ու մեր կյանքն ազատեց»[1]։ Նույնն է հաստատում նաև Արամ Մանուկյանը, հայտարարելով, որ Վանում «կուսակցությունը չէ, որ գործ տեսավ, այլ ամբողջ ժողովուրդը»։

Ինչպիսի՞ն էր հակառակորդների ուժերի հարաբերակցությունը։ Ջևդեթ բեյն ուներ 6000 զինվոր, 5000—6000 համիդեի քրդեր, որոնց հետևից գալիս էր մահմեդական խուժանը, 12 լեռնային ու ծանր հրանոթ, բազմաթիվ հրացաններ ու փամփուշտներ։ Իսկ հայերն ունեին 800 զինվոր, որից 400-ը զինված էր հրացաններով, 400-ը՝ մաուզեր-ատրճանակներով։ Երբ Թիմարի, Հայոց Ձորի ու այլ վայրերի հայերը թշնամու կողմից հալածվելով՝ լցվեցին Վան, քաղաքի հայ զինվորների թիվը հասավ 1053-ի։ Հրացաններն ու ատրճանակները համապատասխանաբար կազմեցին 505 և 549 հատ։ Հայերն ունեին հրացանի 74.824 և ատրճանակի 39.089 փամփուշտ[2]։ Ահա այդպիսի խիստ անհավասար ուժերով էին բախվելու հակառակորդները՝ մեկը կոտորելու, բնաջնջելու մտադրությամբ, իսկ մյուսը դիմադրելու և գոյատևելու հաստատ վճռականությամբ։

Վանի հերոսամարտը սկսվեց 1915 թ. ապրիլի 7-ին։ Որոտում էին թշնամու թնդանոթները, ավերում հայկական դիրքերը, խաղաղ բնակիչների

1 Հայաստանի պետական պատկերասրահ, Հուշագրաձեռագրային բաժին, ֆ. 30, ինվենտար 423, թ. 412։

2 Տե՛ս «Վասպուրական. Վան-Վասպուրականի ապրիլյան հերոսամարտի տասնհինգամյակի առթիվ», 1915—1930, Վենետիկ, ս. Ղազար, 1930, էջ 30։

տներն ու այգիները, սուրում էին գնդակները՝ ամենուր սփռելով սարսափ ու մահ։ Բայց հայերը կանգնած էին իրենց դիրքերում կայուն ու անսասան և թշնամուն պատշաճ հակահարված էին տալիս։ Ապրիլի 8-ին նրանց հաջողվեց հրդեհել անգլիական հյուպատոսության շենքը, ուր ամրացել էին թուրք ժանդարմներն ու զինվորները, իսկ ապրիլի 9—10-ին՝ Համուտ աղայի զորանոցը, ուր հաստատված էին անվրեպ կրակող չերքեզները։ Հայերը ոչնչացրեցին այդ երկու ամրություններից հարկադրաբար փախչող թշնամու համարյա բոլոր զինվորներին։ Կատաղած Ջևդեթ բեյը հայտարարում է, թե դաժանորեն պիտի պատժի ինքնապաշտպանվողներին։ Սակայն հայերը, արհամարհելով կուսակալի սպառնալիքները, շարունակում են արիաբար դիմադրել։

Ապրիլի 12—16-ին մարտերը բորբոքվեցին նոր եռանդով։ Ստանալով համալրումներ, թշնամին անխնա ռմբակոծում էր քաղաքը, ավերում շենքերն ու պաշտպանական դիրքերը, «սալավաթ» գոռալով գրոհի նետվում, գործի դնում հեծելազորը։ Բայց հայերը մարտնչում էին հերոսաբար՝ նոր վնասներ հասցնելով հակառակորդին։ Տեսնելով, որ իրենց պարենն ու ռազմամթերքը նկատելիորեն պակասում են, ապրիլի 15-ին նրանք նամակ ուղարկեցին Կովկաս՝ ռուսական իշխանություններին, գրելով. «Ամեն օր սպասում ենք ռուսական օգնությանը։ Խնդրում ենք շտապել։ Հետո ուշ կլինի»։

Ապրիլի 19-ին Ջևդեթ բեյն անցավ նոր հարձակման, իսկ 21-ին թեժ կռիվները հասան գագաթնակետին։ Նրանք, ինչպես արձանագրում է ականատեսը, «իրենց կատաղությամբ ոչ նախընթաց ունեին, և ոչ էլ այլևս կրկնվեցան»[1]։ Թշնամու թնդանոթներն անընդհատ որոտում էին, նետելով օրական 400 ռումբ, իսկ զինվորներից յուրաքանչյուրը ժամում արձակում էր մինչև 10 հազար փամփուշտ։ Որոշ տեղերում թուրքերը դուրս էին գալիս խրամատներից և նետվում սվինամարտի։ Բայց ստանալով հակահարված, ետ էին շպրտվում։ Հայերը զարմանալի արագությամբ ու ճարպկությամբ վերականգնում էին թշնամու կողմից ավերված իրենց դիրքերը։ Նրանք դիպուկ կրակոցներով գետին էին տապալում հակառակորդներին կամ սվինամարտում ոչնչացնում նրանց։

Վանի հայերը թերևս երբեք այդպիսի միասնություն և համերաշխություն չէին դրսևորել։ Նրանք բոլորն իրենց պարտականությունները կատարում էին չտեսնված նվիրվածությամբ ու բարեխղճությամբ։ Տղամարդիկ հերոսաբար պահում էին իրենց դիրքերը, արհամարհելով մահը։ Ինը հոգուց բաղկացած մի ջոկատ ենթարկվեց թշնամու ահեղ ռմբակոծման։ Հակառակորդն ավերեց նրանց ամրությունները։ Բայց այդ կտրիճները չնահանջեցին, վեց օր շարունակ անքուն ու սոված մարտնչեցին, մինչև որ Զինվորական խոր-

1 Օն. Մխիթարյան, Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930, էջ 146։

հուրդը նրանց փոխարինեց ուրիշներով։ Առանձին մարտիկներ, խրամատավորվելով հարմար դիրքերում, անվրեպ կրակոցներով տապալում էին թշնամու զինվորներին։ Ոմանք թափանցում էին հակառակորդի թիկունքը և հրկիզում նրա ամրություններն ու զինանոցները։ Մարդիկ հաշվի չէին առնում իրենց հիվանդությունները, գերադասում էին մեռնել դիրքում, քան տանը։ Հերոսամարտի մասնակիցներից մեկը կռվում էր տղայի հետ միասին։ Տղան զոհվեց նրա աչքի առաջ։ Կսկիծը սրտում հայրը շարունակեց մարտը։ «Ամբողջ 24 ժամ,— հիշատակում էր Փ. Թերլեմեզյանը,— առանց ուտելու, խմելու, դիրքին մեկ անկյունը դարանի մտած, ան կաշխատեր իր տղուն վրեժը լուծել»։ Մարդիկ ինքնապաշտպանության նպատակին ծառայեցնում էին անգամ իրենց վերջին ունեցվածքը։ Բեռնակիր Մուկուչն իր միակ անկողինը տանում էր խրամատները, որ «կռվողները փաթաթվեն ու տաքանան»։

Վանն ուներ հիանալի արհեստավորներ, որոնք գործի դրեցին իրենց շնորհքը։ Բուլղարացի Գրիգորի մտահղացումով Մարգար Ղարիբջանյանի դարբնոցում ապրիլի 21-ին ձուլվեց «Հայկական թնդանոթը», որը թեև մեծ դեր չխաղաց, բայց և այնպես դարձավ «Այգեստանի ռազմական ոգու սիմվոլ», ներշնչելով պայքարող ժողովրդին «և ոգևորություն, և հույս»։ Ջևդեթ բեյը լսելով նրա ձայնը, սարսափեց, կարծելով, թե ռուսական զորքերն արդեն մտել են Վան։ Շուտով հայ արհեստավորներն ստեղծեցին նաև հրկիզող ու պայթեցնող մի սարք, որը կոչեցին «թուլումբա» մեքենա։ Դրանով նրանք այրում ու ավերում էին հակառակորդի դիրքերն ու ամրությունները։ Փականագործ Փանոսի արհեստանոցում վերանորոգում էին հրացաններն ու ատրճանակները և արտադրում օրական մինչև 2000 փամփուշտ։ Ոսկերիչներ ու փորագրիչներ Գ. Գյումճիպաշյանը, Հ. Կաքավյանը, Վ. Պապիկյանը և Ռ Տուտինյանը սկսեցին վառոդ պատրաստել ու մատակարարել զինագործներին։ Այգեստանի համարյա բոլոր ջրաղացները մնացել էին թշնամու ձեռքում։ Սակայն հայ վարպետները կարճ ժամանակամիջոցում վերանորոգեցին հները, կառուցեցին նորերը և լուծեցին ալյուրի հարցը։

Տղամարդկանցից ետ չէին մնում կանայք։ Նրանք կարում-կարկատում էին կռվողների շորերը, պատրաստում էին ուտելիք ու կրակների միջով հասցնում ռազմիկներին։ Ամեն ինչ զոհաբերվում էր ինքնապաշտպանության գործին։ Մարտերում զոհված Եղիայի մայրը ուներ միայն մի այծ։ Նա այծը տանում էր կռվողների դիրքերը, կթում և աղաչում ռազմիկներին, որ խմեն։ Մի տարեց կին, անցնելով դիրքից դիրք, խորոված ձուկ ու գինի էր բաժանում։ Կանանցից ոմանք նույնիսկ հետախուզության էին գնում, թափանցում էին թշնամու թիկունքը և բերում արժեքավոր տեղեկություններ։ Այդպես վարվեց, օրինակ, 19-ամյա Իսկուհի Համբարձումյանը (Սևո), որն իր սխրագործությունների համար պարգևատրվեց «Պատվո խաչ» շքանշանով։

Ինքնապաշտպանությանն ակտիվ կերպով մասնակցում էին նաև երեխաներն ու պատանիները։ Արհամարհելով մահը, նրանցից շատերն արագորեն նետվում էին թշնամու արձակած ռումբերի վրա, վնասազերծում և հանձնում զինագործներին, որոնք արկերի վառոդն օգտագործում էին փամփուշտներ պատրաստելու համար։ Պատանիներից ոմանք կատարում էին նշանավոր սխրանքներ։ Տասնչորսամյա Արամը հրկիզեց ֆրանսիական հյուպատոսության շենքը, ուր խրամատավորվել էին թուրք զինվորները։

Իրենց ուժերն ընդհանուր գործին ծառայության էին դրել նաև ուսուցիչներն ու աշակերտները։ Դասատուներից մեկը՝ Հովհաննես Մկրտչյան-Կյուլօղլյանը, հիմնադրեց «Ֆանֆար» նվագախումբը, որը հայրենասիրական ու ազատասիրական երգերով ոգևորում էր հայ մարտիկներին։ Չկարողանալով թաքցնել իր բարկությունը, Ջևդեթ բեյը բացականչում էր. «Նրանք իրենց երաժշտությամբ ինձ կհասցնեն կատաղության»։

Համախմբելով իրենց ուժերը և գործի դնելով մարտական ողջ կարողությունները, վանեցիներն արիաբար պաշտպանվում էին և ձախողում թշնամու ծրագրերը։ Անհաջողության մատնված Ջևդեթ բեյն ապրիլի վերջերին դիմեց նոր նենգության. գավառներում դեռ ողջ մնացած հազարավոր հայ գյուղացիների քշեց դեպի Այգեստան, նպատակ ունենալով սփռել համաճարակ ու սով։ Սակայն նրա այդ փորձն էլ տապալվեց։ Զինվորական մարմինը եկվորներին զետեղեց տարբեր խմբերում և ավելի խտացրեց իր շարքերը։

Ապրիլի 28-ին և մայիսի 3-ին թշնամին կազմակերպեց նոր գրոհներ։ Նրա թնդանոթները, գընդացիրները և հրացանները հուժկու կրակ թափեցին հայերի վրա, իսկ հետիոտնը փորձեց ներխուժել նրանց դիրքերը։ Սակայն հակառակորդի այդ ձեռնարկումները նույնպես ձախողվեցին։

1915 թ. ապրիլին Այգեստանից անկախ ու կտրված՝ հերոսամարտ բռնկվեց նաև Վանի Քաղաքամեջ կոչված թաղամասում, որը վիլայեթի վարչական կենտրոնն էր. ինքնապաշտպանությունը այստեղ ղեկավարում էին Շուշանյան վարժարանի տեսուչ Հայկ Կոսոյանը, խանութպան Դ. Սարգսյանը, առևտրական Լ. Գալաճյանը, Եզնիկ վարդապետը և ուրիշներ։

Քաղաքամեջի իրադարձությունները սկսվեցին ու ծավալվեցին համարյա այնպես, ինչպես Այգեստանում։ Ապրիլի սկզբին Զինվորական մարմինը նախքան ռազմական գործողությունների դիմելը, փորձեց բանակցություններ վարել Ջևդեթ բեյի հետ, հուսալով, խաղաղ միջոցներով պահպանել Վասպուրականի հայությունը։ Այդ նպատակով Եզնիկ վարդապետին ուղարկեցին նրա մոտ։ Սակայն կուսակալը կտրուկ պատասխանեց. «Այս երկիրը կամ հային պիտի մնա և կամ թուրքին, երկուսի մեկտեղ բնակիլը այլևս անհնարին է»։

Եվ Զինվորական մարմինը դիմեց ինքնապաշտպանության։ Թուրքական ահռելի ուժի դեմ նա

ուներ 100 հրացան՝ 30 հազար փամփուշտով և 210 ատրճանակ, 30 հազար փամփուշտով, այսինքն՝ ընդամենը 310 զենք՝ 60 հազար փամփուշտով։

Ապրիլի 7-ին թշնամին հարձակման անցավ, ձգտելով գրավել Քաղաքամիջի հայկական դիրքերը։ Սակայն հայերն արիաբար պաշտպանվեցին։ Գազազած հակառակորդը սկսեց ռմբակոծել նրանց տները։ Բնակիչները սկզբում շվարեցին, նույնիսկ խուճապի ենթարկվեցին, բայց շուտով «խոլական խոյանքով մը դուրս եկան կռվի դավադիր թշնամու դեմ հանդիման»։ Նրանք ոչ միայն ետ շպրտեցին թուրքերին, այլև փորձեցին գրավել նրանց հիմնարկներից մեկը։ Ակտիվ դեր խաղացին նաև կանայք։ Քառասնամյա Աղավնի Վարդապետյանը, արհամարհելով մահը և բախտի կամքին թողնելով իր վեց երեխաներին, քաջատեղյակ լինելով տեղանքին, առաջնորդեց հայ մարտիկներին դեպի թշնամու դիրքերը։ Նրա օրինակին հետևեցին նաև ուրիշները։ Հայ ռազմիկներն իրենց դիպուկ կրակոցներով գետին էին տապալում թշնամու զինվորներին, սպանում թընդանոթաձիգներին և լռեցնում նրանց հրանոթները։ Անգամ վիրավոր՝ նրանք չէին ուզում լքել ռազմադաշտը։ 16-ամյա Արամ Կապարուկյանը «զարմանալի անվախությամբ» հրկիզեց ոստիկանատունը և կենտրոնական դատարանը, իսկ Կարապետ և Մարտիրոս Մուրադյանները՝ փոստհեռագրատունը։ Նրանք այդ կառույցների հետ միասին այրեցին այնտեղ դիրքավորված և ինքնա-

պաշտպանվողների վրա անընդհատ կրակ թափող հակառակորդի զինվորներին։ Ապա հայերը հրո ճարակ դարձրին բանկ-օտտոմանի և կառավարչատան շենքերը։ Այրվեց ու մոխիր դարձավ թուրքական բռնապետության խորհրդանիշը՝ օսմանյան պետական դրոշակը։ Ջևդեթ բեյը ստիպված էր խոստովանել, որ «կառավարության նամուսը քաղաքի մեջ կործանվեց»։ Ոգևորված այդ նվաճումներով, հայերը պայթեցրին պետական զինվորական պահեստը, կուսակալի որջը, հակառակորդի բազմաթիվ դիրքեր և, փախուստի մատնելով թշնամուն, բռնագրավեցին հազարավոր փութ հացահատիկ։

Ապրիլի 10-ին և 11-ին թուրքերը նոր հարձակման անցան, բայց հայերը նրանց ետ շպրտեցին։ Ապրիլի 17-ին թշնամին ավելի սաստկացրեց ռմբակոծումները, ձգտելով գրավել հայոց դիրքերը, սակայն կրկին չհասավ հաջողության։ Մեծերի հետ մեկտեղ հերոսամարտում գործուն դեր էին խաղում նաև պատանիներն ու երեխաները։ Ինչպես Այգեստանում, այնպես էլ այստեղ, նրանք նետվում էին հակառակորդի հենց նոր գցած, բայց դեռ չպայթած ռումբի վրա, վնասազերծում էին և տանում զինագործների մոտ, որ նրանք վառոդն օգտագործեն։ Ապրիլի 21-ին կուսակալը երկու հայ կանանց միջոցով նամակ ուղարկեց Զինվորական մարմնին, պահանջելով հանձնվել, այլապես, սպառնում էր բոլորին կոտորել։ Սակայն հայերը արհամարհեցին նրա սպառնալիքները և

շարունակեցին անզիջում պայքարը։ Ջևդեթ բեյը նոր ոմբակոծման ենթարկեց Քաղաքամեջը։ Ծուխ ու փոշի ելավ և փակեց արևի ճամփան։ Սակայն հայերը մնացին անսասան։

Մայիսի սկզբներին ռուսական զորամասերի և հայ կամավորական գնդերի հաղթական առաջխաղացման շնորհիվ Ջևդեթ բեյը թողեց ինչպես Այգեստանի, այնպես էլ Քաղաքամեջի պաշարումը և բռնեց փախուստի ուղին։ Ազատագրված հայերը սկսեցին այրել նրա ամրոցները։ Սահակ Ճանկոյանը բարձրացավ Վանա նշանավոր բերդի գագաթը, վայր շպրտեց դարեր ի վեր բռնության խորհրդանիշ դարձած օսմանյան դրոշակը և նրա փոխարեն ամրացրեց հայոց ազատության դրոշակը։ Մայիսի 4-ին Այգեստանի ու Քաղաքամեջի հերոսամարտերի մասնակիցները հանդիպեցին իրար և շնորհավորեցին միմյանց համառ պայքարով ու զոհերի գնով ձեռք բերած հաղթանակը[1]։

Վանեցիների հաղթանակը պայմանավորված էր նրանով, որ սկզբից ևեթ ընտրեցին ճիշտ որոշում։ Տեսնելով, որ թշնամին անողոք է ու դաժան, վարում է բացահայտ հայաջինջ քաղաքականություն, հերոսաբար հանդես եկան նրա դեմ, գերադասելով պատվաբեր մահն անպատիվ ստրկությունից և ջարդերից։ Նրանք կարճ ժամանակամիջոցում համախմբվեցին, մի կողմ դրեցին

1 Տե՛ս Ա. Ս. Համբարյան, Վանի 1915 թ. հերոսամարտը (ՊԲՀ, 1985, № 2, էջ 33—46)։

իրենց կուսակցական ու անկուսակցական ներհակությունները, ցուցաբերեցին գերազանց կազմակերպվածություն ու կարգապահություն, դարձան մի հոգի, մի սիրտ, մի մարմին և միասնաբար դիմագրավեցին թշնամուն։ Վանեցիները ընտրեցին կռվի ճիշտ տակտիկա՝ պաշտպանվեցին, սխալ ու վտանգավոր համարելով հարձակումը և այդ նպատակով կառուցեցին ու վերակառուցեցին այնպիսի ամրություններ ու դիրքեր, որոնք կարող էին արժանանալ փորձված ռազմական մասնագետների հավանությանը։ Թեև կտրված էին արտաքին աշխարհից, այնուամենայնիվ, նրանք ուժ ու եռանդ էին ստանում ռուսական զորամասերի ու հայ կամավորների խմբերի մոտալուտ ժամանման և օգնության հույսերից։

Վանի հերոսամարտը բարձրացրեց հայ ժողովրդի պայքարի ոգին և ապացուցեց, որ կարելի է փրկվել անգամ ահեղ թշնամու դեմ կռվելիս համախմբված ու վճռական պայքարով։ Այդ հերոսամարտի շնորհիվ կոտորածներից փրկվեց 150—200 հազար հայ։

Վանեցիների գերազանց ինքնապաշտպանությունից կատաղած՝ իթթիհատի պարագլուխները 1915 թ. մայիսի երկրորդ կեսին Թալեաթի նախագահությամբ հավաքվեցին խորհրդակցության և քննարկեցին արևմտահայերի բնաջնջումն արագացնելու հարցերը։ Հոետորները ջանում էին մեկը մյուսին գերազանցել նրանց շուտափույթ ու արմատական ոչնչացման իրենց ելույթներով ու առաջարկություններով։ Դոկտոր Նազիմը գրտ-

նում էր, որ այժմ չպետք է բավարարվել հայերի մասնակի ջարդերով, ինչպես 1909 թ. Ադանայում։ Անհրաժեշտ է հայ ազգն այնպես արմատախիլ անել, որ «մեր հողի վրա անհատ մը անգամ չմնա, հայ անունը մոռցվի»[1]։ Դա հարկավոր է իթթիհատին նաև նրա համաթուրանական ծրագրերի իրագործման համար։

Ջավիդ բեյը, պաշտպանելով այդ առաջարկը, նշեց, որ հայերի բնաջնջումն անհրաժեշտ է նաև թուրքերի տնտեսական գերիշխանության ապահովման համար։ «Տնտեսական իշխանությունը հայու ձեռքն է,— ասաց նա,— հայերեն ոչ ոք մնալու պայմանով բնաջնջումը մեր ազգային քաղաքականության տեսակետին որչափ որ ստիպողական պետք մըն է, նույնչափ ալ թուրքին տնտեսական իշխանությունը հիմնելու համար կարևոր է...»[2]։

Բեհաէդդին Շաքիրը, նշելով, որ պետք է ոչընչացնել բոլոր հայերին՝ «երեխա, կին, աղջիկ, ծեր ու անկար, մինչև վերջին անհատը», գտնում էր, որ այդ խնդրի լուծումը անհրաժեշտ է դնել բանտարկված գողերի, ավազակների և նման տականքների վրա։ «Ասոնք իրենց գործած ոճրագործության, մարդասպանության հետևանքով զինվորական պատիվը չարատավորելու համար՝ զինվորական ծառայութենե զերծ կացուցած

1 Մեվլան Զատե Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Պեյրութ-Լիբանան, 1968, էջ 98։

2 Նույն տեղը, էջ 101։

մարդիկ են։ Եթե ադոնք արձակել տալով մեզի ենթարկենք և խումբերու բաժանենք, կկարծեմ, որ շատ լավ մասնավոր կազմակերպություն մը ստեղծած կըլլանք»[1]։ Ապա նա ավելացնում է, որ եթե մենք մեկ ամսվա ընթացքում հավաքենք նման 10—12 հազար մարդ, մեր խնդրի լուծումն ապահոված կլինենք։

Հայերի բնաջնջման կոչով հանդես եկան խորհրդակցության նաև մյուս մասնակիցները՝ Շուքրի բեյը, Հասան Ֆեհմին, Գարա Քեմալը և մյուսները։ Ապա Թալեաթի պահանջով հարցը քվեարկության դրվեց և որոշումն ընդունվեց միաձայն[2]։

Այնուհետև երիտթուրքական իշխանությունները նոր եռանդով շարունակեցին իրենց ոճրագործությունները։ Նրանք իրագործում էին հայաջինջ քաղաքականությունն ամբողջ երկրում՝ տալով նրան ավելի ու ավելի դաժան բնույթ։ Դահիճները, սակայն, կայսրության մի շարք վայրերում հանդիպում էին հայերի դիմադրությանը՝ մի տեղ ուժեղ ու համառ, մի այլ տեղ՝ թույլ ու անկազմակերպ։

1915 թ. մայիսին, երբ թուրքական բանակը նահանջում էր, Մուշում տեղի ունեցավ ժողով, որին մասնակցեցին դաշնակցական կուսակցության ներկայացուցիչները և տեղական երևելիները։ Հայդուկ Հաջի Հակոբ Կոտոյանը և նրա

1 Մեվլան Զատե Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության մոտ ծալքերը և իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Պեյրութ—Լիբանան, 1968, էջ 116։

2 Նույն տեղը, էջ 101։

կողմնակիցներն առաջարկեցին ապստամբություն բարձրացնել քաղաքում, բռնագրավել իշխանությունը և տեր դառնալ պարենի պաշարներին ու զինապահեստներին։ Նրանք ելնում էին այն բանից, որ Մուշում թուրքական ուժերը խիստ թույլ են, չեն կարող դիմադրել ապստամբներին, իսկ ռուսական զորամասերը մոտ են, մեկ կամ երկու օրվա ընթացքում կմտնեն քաղաք և հարցը կփակեն։ Սակայն դաշնակցության ներկայացուցիչներ Ռուբեն Տեր-Մինասյանն ու Վահան Փափազյանը մերժեցին այդ առաջարկությունը, պատճառաբանելով, որ ռուսական բանակը շուտով ինքը կլուծի բոլոր խնդիրները և կարիք չկա տեղիք տալ ավելորդ արյունահեղությունների։

Հուլիսի 10-ին, երբ թուրքական իշխանությունները հրաման են արձակում Տարոնի հայության բռնագաղթի մասին, Հաջի Հակոբ Կոտոյանը և նրա զինակիցները կրկին առաջ են քաշում ինքնապաշտպանության դիմելու հարցը։ Սակայն դարձյալ մերժվում են։ Այս անգամ նրանց դեմ են դուրս գալիս Մշո հոգևոր առաջնորդ Վարդան վարդապետը և նրա կողմնակիցները, հայտարարելով, որ դիմադրությունը կվերջանա խիստ աղետալի հետևանքներով, անհրաժեշտ է զենքը հանձնել և կատարել կառավարության կարգադրությունը։ Նրանք փորձում են հավատացնել, որ միայն այդ կերպ կարելի է փրկվել կոտորածներից։ Այլևս չուզենալով լսել առարկություններ, հոգևոր առաջնորդը եզրափակում է՝ ով ուզում է դիմադրել իշխանություններին, թող մնա, իսկ ինքը կատարելու է նրանց պահանջները։ Այդպես էլ իր կողմնակիցների հետ միասին նրանք զոհ են գնում թուրքական դահիճների սրին։

Մերժելով վարդապետի դիրքորոշումը, Հաջի Հակոբ Կոտոյանը վճռում է իր 30 կտրիճներով դիմադրավել թշնամուն, փրկել Մուշի հայությանը ջարդերից։ Իր զինակցի՝ Պոլեյան Մջոյի (Պոլե) հետ միասին դասավորում են իրենց ուժերը քաղաքում ու նրա արվարձաններում, կառուցում են ամրոցներ, փորում են խրամատներ, տների միջև ստեղծում են հաղորդակցություններ և տեղացի ու փախստական հայերով համալրելով ինքնապաշտպանվողների շարքերը, պատրաստվում կռվի։ Հաջի Հակոբ Կոտոյանը կոչ է անում մարտական ընկերներին՝ պայքարել հերոսաբար, առանց վհատության, կռվել «մինչև վերջին փամփուշտը»։

Մարտերը թուրքական զորամասերի և հայ դիմադրական ուժերի միջև սկսվում են 1915 թ. հուլիսի 11-ին։ Հայերը կռվում են անօրինակ քաջությամբ։ Նրանք ոչ միայն ետ են մղում թշնամու հարձակումները, այլև պատճառում զգալի վնաս։ Ոմանք, վտանգելով իրենց կյանքը, թափանցում են թուրքերի զորամասերը և սպանում նրանց հրետանավորներին։ Տղամարդկանց հետ միասին արիաբար կռվում են նաև կանայք։ Ականատեսը գրում է. «Ու ինչպես չսքանչանալ ու չհիանալ մշեցի հայ կիներու վրա, որոնք ամենքն ալ լացն ու վախը թողած՝ փոքր տղոց իբրև բաժին, իրենք կմասնակցեին այդ անհավասար գոտեմարտին,

իրենց կովողներուն ջուր, հաց, ռազմամթերք, հայթայթելով, դիրքեր շինելով, անձներովը կըռվողները պաշտպանելով իրենց չորս կողմը, խընդում դեմք ցուցնելով հերոսներուն։ Ծնած աղջիկ, ապրեցան տանջանքը և մեռան իբրև հերոս տղամարդ»[1]։

Հուլիսի 12-ին շարունակվում է մշեցիների գոյամարտը։ Թշնամին կատաղորեն ռմբակոծում է հայոց դիրքերը, քանդում ու ավերում է դրանք, նետվում սվինամարտի։ Հայերը, որքան էլ կըռվում են անձնուրաց, անհավասար մարտերում ստիպված են լինում նահանջել դեպի Զորի թաղը։ Հաջորդ օրը Թշնամին շարունակում է ռմբակոծումները, նորանոր վնասներ հասցնելով հայերին։ Ընկնում են հայերից շատերը, սպառվում է նրանց ռազմամթերքը, տեղ չի հասնում սպասվող ռուսական զորամասերի օգնությունը։ Հաջի Հակոբ Կոտոյանի գլխավորությամբ հայերը ստիպված են լինում թողնել իրենց դիրքերը, փորձում են ճեղքել հակառակորդի պաշարումը ու բարձրանալ Սասուն։ Բայց այդ ճանապարհին շատերը զոհվում են, ընկնում են նաև Հաջի Հակոբ Կոտոյանն ու նրա զինակիցները։ Միայն քչերն են ողջ մնում ու նահանջում դեպի Քան սար։ Թշնամին սակայն շարունակում է հետապնդել հայերին։ Ամրանալով սարի կիրճերում և անտառներում,

1 «Տարոնոյ ինքնապաշտպանություն և ջարդը 1914—1915», պատմեց Եղիշե քհնյ. Տեր-Պարսամյան, (նախկ. առաջն. փոխանորդ Տարոնո), գրեց Սիսակ Նալբանդյան, Ֆրեզնո, Քալիֆորնիա, Մ. Ն., 1920, էջ 54—56)։

նրանք փորձում են դիմադրավել թուրքերին։ Տեղ-տեղ նույնիսկ կարողանում են ետ շպրտել հակառակորդին, բայց վերջինս, ի վերջո, կոտրում է նրանց դիմադրությունը և սրի քաշում գերվածներին։ Հայերի փոքր մասն է կարողանում խուսափել ջարդերից և բարձրանալ Սասուն։

Ինքնապաշտպանական ահեղ կռիվներ մղվեցին նաև Մուշի դաշտի գյուղերում։ 1915 թ. հուլիսի 1-ին ջարդարարների դեմ ոտքի ելան Կառնեն գյուղի բնակիչները՝ հայդուկ Մկրտիչ Սողոմոնյանի գլխավորությամբ։ Նրանք երեք օր շարունակ համառ մարտեր մղեցին թշնամու գերազանց ուժերի դեմ, բայց ի վերջո պարտվեցին և բոլորն էլ զոհվեցին։ Մի քանի օր անց ինքնապաշտպանական կռիվներով հանդես եկան նաև ալիջանցիները՝ Միսաք Մղեյանի ղեկավարությամբ։ Օրեր շարունակ նրանք դիմադրեցին թուրքական զորքերին, փախուստի մատնեցին ու գրավեցին նրանցից զենքեր և պարենամթերք։ Թշնամին ձեռնարկեց նոր հարձակում։ Ալիջանցիները թեև շարունակեցին արիաբար դիմադրել, բայց ռազմամթերքի ու պարենի սպառման պատճառով հարկադրված եղան տեղի տալ։ Ներխուժելով գյուղ, թուրքերը հոշոտեցին նրա բնակիչներին։ Սակայն ալիջանցիների մի մասը կարողացավ ազատվել ջարդարարներից և թաքնվել լեռներում։ Ինքնապաշտպանական կռիվներ վարեցին նաև ավրանցիները՝ Հայկ Տեր-Վարդանյանի ու Մակար Խարախանյանի գլխավորությամբ։ Ամրանալով տների կտուրներում և շրջակա բլուրնե-

ցում, նրանք շուրջ 10 օր դիմադրեցին թշնամուն, սպանելով բազմաթիվ հրոսակներ, բայց անհավասար պայքարում բոլորն էլ զոհվեցին։ Բացի նշված գյուղերից, գոյապայքարի ելան նաև Մշո դաշտի Վարդենիս, Զիարեթ, Բաղլու, Բոկլան և մի շարք այլ գյուղերի բնակիչները։

1915 թ. ամռանն ահեղ մարտեր ծավալվեցին Սասունում։ Արևմտյան Հայաստանի այդ գավառն ուներ ռազմա-ստրատեգիական հարմար դիրք. նրա սարերը, անտառները, ձորերը, կիրճերն ու խորխորատները հնարավորություն էին տալիս կազմակերպելու ամուր պաշտպանություն։ Միաժամանակ դրանք խոչընդոտում էին հակառակորդի զանգվածային հարձակումներին ու գրոհներին։ Կոտորածների օրերին բազմաթիվ հայեր, փախչելով թուրքական յաթաղանից, հավաքվել էին Սասունում և մեծացրել նրա բնակչությունը։ Նրանցից կարելի էր կազմակերպել ամուր դիմադրություն, մանավանդ, երբ շատերն ունեին հրացաններ, ատրճանակներ ու սառը զենքեր։ Սակայն այդ հնարավորությունները սկզբից ևեթ չօգտագործվեցին ինքնապաշտպանության նպատակով։ Պատմաբաններից ոմանք դրանում մեղադրում են Սասունի ղեկավարներին՝ դաշնակցության ներկայացուցիչներ Ռուբեն Տեր-Մինասյանին ու Վահան Փափազյանին, մյուսները մերժում են այդ մեղադրանքը, գտնելով, որ նրանք եղած ուժերով չէին կարող դիմագրավել անհամեմատ հզոր թշնամուն և դիմադրելիս, կմղեին հայերին լիակատար կործանման։

Համենայնդեպս փաստն այն է, որ 1915 թ. օգոստոսի 1-ին թուրքական զորաբանակները քրդական համիդեի գնդերի հետ միասին անցան հարձակման՝ գրավելով հայկական գյուղերը։ Չհանդուրժելով այդ իրավիճակը, Սասունի աշխարհիկ ու հոգևոր երևելիները՝ Փեթարցի Մանուկը, Դավիթ Երիցյանը, Սոլուխցի տեր Ստեփանը, Գոմսեցի Կորյունը, տեր Մամբրեն, Սաղտունի գյուղապետ Հովհաննեսը, իշխնձորցի Արթինն ու Կրպոն և ուրիշներ հավաքեցին ու համախմբեցին լեռնականներին և գոյապայքար մղեցին հակառակորդի դեմ։ Ահեղ կռիվներ եղան Գոմուց վանքի, Անդոկի, Իշխնձորի, Շատախի և Կելիե-Կուզանի գյուղերում։ Հայերը ոչ միայն կասեցնում էին թշնամու առաջխաղացումը, այլև հաճախ մատնում նրան փախուստի։ Բայց կատաղած հակառակորդը, համալրելով իր զորամիավորումները, անցնում էր նոր հարձակման։ Այդ վճռական պահին, որոշ հեղինակների վկայությամբ, դաշնակցության վերոհիշյալ ներկայացուցիչները, հայտարարում են սասունցիներին, թե նրանք ազատ են, ով ինչպես կարող է, թող փրկվի և, վերցնելով իրենց հետ տասնյակ զինվորներ, փախչում են Կովկաս։ Առաջանում է խուճապ։ Ոմանք շվարում են, մյուսները նրանց ետևից լքում են Սասունը։ Սակայն հայդուկային կռիվներում կոփված և բազմաթիվ փորձանքներով անցած Մկրտիչ Բոլեյանը, կողբեցի Վարդանը և նրանց զինակիցներն արագորեն կազմակեր-

պում են լեռնականներին և ղեկավարում նրանց գոյապայքարը։

Բայց թշնամին ուժեղ էր ու դաժան։ Հենվելով իր առավելության վրա, շարունակում է առաջ ընթանալ՝ ոչնչացնելով լեռնականների կուտակումները։ Ողջ մնացած սասունցիները շարժվում են դեպի Ծովասար, ապավինելով իրենց ժայռերին, կիրճերին ու անտառներին։ Նրանք խրամատավորվում են և շարունակում կռիվները։ Բայց ինքնապաշտպանության ճակատագիրն արդեն վճռված էր։ Օգոստոսի կեսերին հակառակորդը համոզվելով, որ լեռնականներն արդեն ջախջախված են, իր զորամասերը դուրս է բերում Սասունից, թողնելով միայն առանձին ջոկատներ։ Թուրքական իշխանությունները փորձում են խաբեությամբ որսալ դեռ դիմադրող հայերին։ Ուստի հայտարարում են, թե ովքեր կամովին հանձնվեն, կփրկվեն կոտորածներից և անվնաս ու ապահով կվերադառնան իրենց գյուղերը։ Դյուրահավատները լսում են ու սրի քաշվում, սակայն թուրքերին լավ ճանաչողները, պատասխանում են. «Մեր լեռներուն մեջ անոթի ու ծարավ մեռնիլ ավելի լավ է, քան թե երթալ թշնամիին ոտքը և նախատինքի և անարգանքի մեջ մեռնիլ։ Այստեղ մահը բարձր ու վսեմ է, որքան բարձր ու վսեմ են մեր լեռները։ Այստեղ մահը անկեղծ է և մաքուր, որքան մաքուր են մեր լեռներու օդն ու ձյունը»։ Այսպես՝ հակառակորդին չհավատացողներն ու չհանձնվողները փրկվեցին, երբ ռուսական բանակները,

ջախջախելով թուրքական զորամասերին, նվաճեցին Մուշն ու Սասունը։

Արևմտահայերը ինքնապաշտպանական նշանավոր մարտեր մղեցին նաև Շապին-Գարահիսարում։ Պատերազմի նախօրյակին այդ քաղաքն ուներ մոտ 95 հազար բնակիչ (թուրք, քուրդ, չերքեզ, հույն, հայ և այլն), որից 25 հազարը՝ հայ։ Նրանք, հատկապես հայերը, զբաղվում էին հիմնականում արհեստներով ու առևտրով և մասամբ երկրագործությամբ։ Թուրքական իշխանությունները պատերազմի հենց սկզբից հարյուրավոր հայեր զորակոչեցին, զբաղեցնելով զանազան կառույցներում։ Թուրք սպաներն ու զինվորները վիրավորում էին զորակոչված հայերի մարդկային ու ազգային արժանապատվությունը, անգամ ծեծում էին նրանց, հասցնելով մարմնական վնասվածքներ։ Չհանդուրժելով այդ բռնությունները, հայ երիտասարդները լքեցին զորամասերը և վերադարձան իրենց քաղաքը։ Թուրքական իշխանությունները սկսեցին հետապնդել նրանց և պատժել իբրև դասալիքների։ Թեպետև հայերը բացատրում էին օսմանյան պաշտոնյաներին, որ իրենք դասալիք չեն, հարկադրաբար են թողել զինվորական ծառայությունը, չեն կարողացել հանդուրժել բանակում եղած հակահայկական, անմարդկային վերաբերմունքը, բայց նրանց արդարացման ճիգերը մնում էին ապարդյուն։ Թուրքական իշխանությունները շարունակում էին խուզարկությունները ու ձերբակալությունները և «դասալիքի» պատրվակով բանտարկում նաև գործի հետ բո-

յորովին առնչություն չունեցող անձանց։ Շուտով նրանք ազատ արձակեցին մահմեդական ձերբակալված գողերին, ավազակներին ու մարդասպաններին և բոլորին ուղղեցին հայերի դեմ։ Այդ հանցագործները ոստիկանների ու ժանդարմների խրախուսանքով, նաև ուղեկցությամբ հարձակվում էին հայերի վրա և թալանում ու անարգում էին նրանց։ Նրանք դավադրաբար սպանեցին Շապին-Գարահիսարի հոգևոր առաջնորդ Վաղինակ ծ. վարդապետ Թորինյանին։

Հայերի համար պարզ դարձավ, որ թուրքական իշխանությունները զանգվածային ջարդեր են կազմակերպելու նաև Շապին-Գարահիսարում։ Նրանք պատրաստվեցին ինքնապաշտպանության։ Քաղաքի հասարակական-քաղաքական տարբեր շրջանների ներկայացուցիչները՝ Ղուկաս Դովլաթյանը (Տեռվլեթյան) կամ Ղուկաս Աղբարը, Ավագ Տուրիկյանը (հնչակյաններ), Շապուհ և Իսրայել Օզանյանները, Գարեգին Կարմիրյանը (վերակազմյալ հնչակյաններ), Վահան Հյուսիսյանը, Հմայակ Գարակեոզյանը (դաշնակցական) և Գասպար Ղուկասյանը (անկուսակցական) հավաքվեցին խորհրդակցության ու կազմեցին Զինվորական խորհուրդ։ Նրանք կոչ հղեցին իրենց հայրենակիցներին՝ թողնել ամեն ինչ և նվիրվել ինքնապաշտպանության գործին։ Շուտով հայերը սկսեցին քանդել քաղաքի սալահատակները և դիրքեր պատրաստել։ Միաժամանակ նրանք դիրքերի վերածեցին իրենց տները և նպատակադրվեցին՝ «բնաջնջվելե առաջ բնաջնջել»։

Անկախ հայերի այդ գործողություններից, թուրքական հրամանատարությունը 1915 թ. հունիսի 3-ին հրամայում է ռմբակոծել հայկական թաղամասերը։ Հայերը պատասխանում են հրացանային կրակոցներով, նռնակներով և կասեցնում հակառակորդի հազարավոր զինվորների առաջխաղացումը։ Զինվորական խորհուրդը հանձնարարում է Շապուհ Օզանյանին կազմակերպել թուրքական բանտում փակված հայերի ազատագրումը։ Մի խումբ կտրիճների հետ նա թափանցում է հակառակորդի տարածքը, սպանում է բանտապահներից մի քանիսին, փախուստի մատնում մյուսներին և մտնելով զնդան, տեսնում բոլոր հայ կալանավորներին սպանված։ Շապուհը, բանտից դուրս գալիս, ընկնում է հակառակորդի գնդակից, բայց նրա ընկերները հաղթահարելով մի շարք դժվարություններ, վերադառնում են իրենց դիրքերը։ Հունիսի 5-ին թուրքական զորամասերը հրդեհում են հայկական տները։ Կրակն արագորեն լափում է հայերի փայտաշեն կառույցները և մոխրակույտի վերածում դրանք։ Զինվորական խորհուրդն արտակարգ կազմակերպվածությամբ տեղափոխում է հայ բնակչությանը Շապին-Գարահիսարի բերդը։ Ապա պարենամթերքի ու զինամթերքի վրա սահմանում է խստագույն հսկողություն և խնայողություն։ Թուրք խուժանը հարձակվում է հրդեհված ու լքված հայկական թաղամասի վրա և հափշտակում այն ամենը, ինչ հնարավոր էր։ Հայերը կրակի տակ են առնում նրանց և գետին տապալում շատերին։ Թուրքերը

խուճապահար փախչում են։ Հայերը հրկիզում են թուրքերի տները, մոխրակույտի վերածելով քաղաքի թուրքական թաղամասը։

Թուրքական հրամանատարությունը դիմում է օսմանցիների սովորական նենգությանը. փորձում է խաբեությամբ ձեռք գցել հակառակորդին և հաշվեհարդար տեսնել նրա հետ։ Ուստի հունիսի 9-ին մի հայ կնոջ, իբրև պատվիրակ, ուղարկում է ապստամբ հայերի մոտ և առաջարկում հանձնվել, խոստանալով խնայել նրանց կյանքը։ Զինվորական խորհուրդը պատասխանում է, որ հայերը չեն հավատում թշնամու խոստումներին և կշարունակեն դիմադրությունը։ Հունիսի 10-ին թուրքերը վերսկսում են կրակը և ռմբակոծում բերդը։ Նրանք փորձում են գրավել հայերի դիրքերը։ Բայց ընկնում են ինքնապաշտպանության մարտիկների կրակի տակ, կորուստներ տալիս ու հետ շպրտվում։ Հաջորդ օրը թշնամին նոր հարձակման է անցնում՝ առաջ մղելով խուժանին։ Հայերը, սակայն, շարունակում են համառ մարտերը։

Հունիսի 15-ին նորից է հայտնվում կուսակալ Մուամերի բանագնացը, որը սպիտակ դրոշ պարզած, հայերին է տալիս նրա նամակը, ուր ասվում էր, որ հանձնվելու դեպքում ներում կշնորհվի բոլորին, այլապես սպառնում էր «թնդանոթներով հիմնեն կործանել բերդը...»[1]։ Զինվորական

[1] Արամ Հայկազ, Շապին Գարահիսար ու իր Հերոսամարտը, Նյու Յորք, 1957, էջ 207։

խորհուրդն այս անգամ էլ տալիս է մերժողական պատասխան։ Կատաղած թշնամին ձեռնարկում է նոր հարձակում և երկու օր շարունակ չորս կողմից ռմբակոծում հայոց ամրոցը, բայց չի կարողանում պատճառել մեծ վնաս։ Ընդհակառակը, հայերը, հարմար դիրք գրավելով՝ վնաս են հասցնում հակառակորդին, կոտորում ու փախուստի մատնում նրան։ Սակայն հայերի պարենի ու զենքի պաշարները հետզհետե նվազում են, իսկ անթաղ դիակները նեխում են՝ տարածելով գարշահոտություն. համաճարակը դառնում է անխուսափելի։ Թշնամին անդադրում ռմբակոծում է հայոց դիրքերը և հնարավորություն չի տալիս թաղելու դիակները։ Այդուհանդերձ, շապին-գարահիսարցիները շարունակում են համառորեն պայքարել և կասեցնել հակառակորդի առաջխաղացումը։

Հունիսի 19-ին կուսակալ Մուամերին նոր բանագնացներ է ուղարկում և պահանջում հանձնվել։ Հայ մարտիկներից ոմանք, տառապելով սովից ու ծարավից, մտածում են ընդունել նրա առաջարկությունը, նույնիսկ պատրաստակամություն են հայտնում իրենց վրա վերցնել բանակցությունների պարտականությունը, սակայն մեծ մասը հայտարարում է. «Մեռնելու երկու ձև կա. պատվավոր և անպատիվ մահ, թող աշխարհը ըսե, թե շապին-գարահիսարցիք պատվով մեռան»[1]։ Եվ Զինվորական խորհուրդը մերժողական

[1] «Հուշամատյան...», էջ 777։

պատասխան է ուղարկում կուսակալին։ Գազազած Թշնամին այս անգամ որոշում է գրոհել ավելի մեծ ուժով և հիմնովին ոչնչացնել հայերին։ Հունիսի 23-ին նա կրակ է թափում բերդի վրա։ Զինվորները դուրս են գալիս իրենց դիրքերից և թընդանոթային կրակի պաշտպանությամբ փորձում ներխուժել բերդը։ Բայց հայերը պաշտպանվում են խիզախորեն։ Նրանք հրացանի, ատրճանակի դիպուկ կրակոցներով ու նռնակներով կոտորում են թուրքերին։ Կանգ չառնելով զոհերի առաջ, Թշնամին ձգտում է թափանցել բերդը։ Եվ դա, ի վերջո, նրան հաջողվում է։ Հյուսիսային կողմից թուրքերը կարողանում են ճամփա բացել, ներխուժել բերդ և խիստ վտանգել հայերի պաշտպանությունը։ Անհրաժեշտ էր ոչնչացնել ներխուժածներին և փակել հակառակորդի բացած ուղին։ Այդ բանը կարող էին անել միայն միջնաբերդի վերևում կանգնած հացթուխ կանայք, բայց նրանք ռումբեր չունեին։ Եվ ռումբը նրանց հասցնում է 14-ամյա Հմայակ Թևեքելյանը, որը վտանգի ենթարկելով իր կյանքը, Թշնամու կրակի միջով կատարում է առաջադրանքը։ Տեղ հասնելով, պատանին զոհվում է հակառակորդի գնդակից։ Կանայք նրա տարած ռումբը շպրտում են թուրքերի խմբավորման վրա։ Անսպասելի պայթյունից Թշնամին փախչում է խուճապահար։ Ինքնապաշտպանության մարտիկներն ազատ շունչ են քաշում, բայց պարենամթերքի ու ռազմամթերքի պակասը, սովն ու համաճարակը դժվարացնում են նրանց պայքարը, անասելի վատթարացնում վիճակը։

Շապին-գարահիսարցիները շարունակում են հուսալ, թե շուտով կգա ռուսական բանակը, բայց ապարդյուն։

Ղուկաս Աղբարը հրավիրում է խորհրդակցություն և քննարկում իրավիճակը։ Ոմանք առաջարկում են ճեղքել Թշնամու պաշարումն ու դուրս գալ, մյուսները գտնում են, թե դա անհնար ու անհեռանկարային է, պետք է անձնատուր լինել։ Հայերի մի մասն ընդունում է առաջին, իսկ մյուսը՝ երկրորդ առաջարկությունը։ Հունիսի 29-ին, այսինքն՝ գոյակովի 27-րդ օրը առաջինները Ղուկաս Դովլաթյանի գլխավորությամբ հնարամիտ ու սրընթաց հարձակումով ճեղքում են Թշնամու օղակը և հեռանում, իսկ երկրորդները մնում են բերդում։ Շուտով թուրքերը ներխուժում են բերդ և անխնա կոտորում բոլորին։ Հայուհիներից ոմանք նրանց ձեռքը չընկնելու համար նետվում են բերդից։ Թշնամին հետապնդում է պաշարումից դուրս եկածներին, ձգտելով ոչնչացնել բոլորին, սակայն դա նրան չի հաջողվում։ Աղատվածները վարում են պարտիզանական պայքար, որոշ տեղերում նույնիսկ շրջապատում ու բնաջնջում թուրքական զինախմբերին։ Այդ պայքարում զոհվում են նաև հայերը։ Կիրճն անցնելիս Ղուկաս Աղբարը ընկնում է Թշնամու գնդակից։ Նահատակվում են նաև նրա զինակիցներից շատերը։ Քչերին է հաջողվում ազատվել մահից, միանալով ռուսական բանակին[1]։

1 Տե՛ս Հակոբ Տեր Հարությունյան, Շապին-Գարահիսարի ապստամբությունը, Պոստոն, 1955 թ.։

Իթթիհատական յաթաղանի դեմ պայքարի ելան նաև Ուրֆայի (Ուռհայի կամ Եդեսիայի) հայերը։ Առաջին աշխարհամարտի նախօրյակին այդ քաղաքում կար շուրջ 100 հազար բնակչություն, որից 35 հազարը հայ։ Հայերը զբաղվում էին գերազանցապես արհեստներով ու առևտրով, ունեին եկեղեցի և կուլտուր-կրթական զանազան հաստատություններ։ Պատերազմի օրերին նրանք ակնատես են լինում, թե ինչպես էին երիտթուրքական իշխանություններն Արևմտյան Հայաստանից տեղահանված հայերին քշում Արաբիայի անապատները։ Տարագիրների քարավաններն անցնում էին նրանց քաղաքի միջով։ Շուտով իթթիհատական ոճրագործները սկսում են ուժեղացնել բռնություններն ու հալածանքները նաև Ուրֆայում։ Նրանք խուզարկում են հայերի տները, կողոպտում ու թալանում նրանց, ձերբակալում ու աքսորում անմեղ մարդկանց։ Հայերը չէին ցանկանում սրել իրադրությունը, թեև տհաճությամբ, բայց կատարում էին նրանց կարգադրություններ։ Սակայն օրըստօրե համոզվում էին, որ դահիճները վաղ թե ուշ հաշվեհարդար են տեսնելու նաև իրենց հետ։ Քաղաքի երևելիները հավաքվում են խորհրդակցության և քննարկում իրենց դիրքորոշման հարցը։ Ոմանք կարծում են, թե կարելի է խուսափել կոտորածներից թուրքական պաշտոնյաներին կաշառելու ճանապարհով, մյուսները մերժում են այդ կարծիքը և պահանջում, որ պետք է դիմել ինքնապաշտպանության։ Հաղթում է վերջին տեսակետը։ Շուտով 30-ամյա

Մկրտիչ Յոթնեղբայրյանի գլխավորությամբ ստեղծվում է Զինվորական խորհուրդ, որի կազմում մտնում են Գևորգ Ալահայտոյանը, Սարգիս Յոթնեղբայրյանը, Հարություն Ռասթեկելյանը, Վաղարշակ Մեսրոպյանը, Հարություն Սիմոնյանը և Մովսես Սուճյանը։ Զինվորական խորհուրդը ինքնապաշտպանական ուժերը բաժանում է վեց խմբերի, որոնց ղեկավարներ է նշանակում իր անդամներին։ Միաժամանակ ստեղծվում են պարենամթերքի հայթայթման ծառայություն, զենքի ու զինամթերքի արտադրություն և վերանորոգման արհեստանոց, բուժօգնության կետեր և այլն։ Թշնամու բազմահազար զինվորների ու խուժանի դեմ մարտի են պատրաստվում ոմանց տվյալներով 800, ըստ այլոց՝ 2000[1] հայեր, ունենալով իրենց տրամադրության տակ մեծ մասամբ հին հրացաններ և սահմանափակ քանակությամբ փամփուշտներ։ Կռվող ուժերը, իհարկե, խիստ անհավասար էին, բայց հայերին ոգեշնչում էր հայրենասիրության վեհ զգացումը։

1915 թ. սեպտեմբերի 29-ին, երբ իշխանությունները փորձում են կատարել նոր խուզարկություններ ու ձերբակալություններ, հնչում է եկեղեցու զանգը և բոլորին ի զեն կոչում։ Հայաբնակ թաղերը ծածկվում են բարիկադներով, գործի են անցնում բոլորը։ Նրանք խրամատավորվում են և սպասում թշնամու հարձակմանը։ Ինք-

1 Տե՛ս Ռ. Ա. Սահակյան, Ուրֆայի 1915 թ. հերոսամարտի պատմությունից (ՊԲՀ, 1988, № 3, էջ 104—113)։

նապաշտպանական ուժերը դասավորում են Մկրտիչ Յոթնեղբայրյանն ու Հարություն Ռասթեկելյանը։ Նրանք շրջում են դիրքերը, վերացնում պաշտպանության բացերը, բացատրում պահի կարևորությունն ու նշանակությունը և ոգևորում զինվորներին վճռականությամբ ու արիությամբ, գոյակռվի անհրաժեշտությամբ։

Ուրֆայի մյութեսարիֆը ապստամբներից պահանջում է թողնել դիրքերը, բացել խանութները և զբաղվել ամենօրյա գործերով։ Դրանով նա փորձում է խաբել հայերին և հեշտացնել ջարդերը։ Սակայն ապստամբները պատասխանում են, որ իշխանությունները սպանել են հայ զորակոչված զինվորներին, բանտարկյալներին, անգամ անմեղ մարդկանց, իսկ ողջ մնացողները չեն ուզում ոչխարի նման մորթոտվել։ Նրանք «ուխտած են մեռնիլ մինչև վերջին փամփուշտն ու վերջին մարդը»։

Սեպտեմբերի 30-ին թուրքական խուժանը մոլլաների ու խոջաների առաջնորդությամբ հարձակվում է հայոց դիրքերի վրա։ Ինչպես այլ տեղերում, այստեղ ևս թուրքերն իրենց հետ վերցրել էին պարաններ ու պարկեր, որ թալանեին իրենց զոհերին։ Նրանք գիշատիչ ախորժակով նետվում էին առաջ, ձգտելով որքան հնարավոր է շուտ գրավել հայերի տները։ Խուժանը գրավում է կաթոլիկ հայերի եկեղեցին և ավելի մոտենում պաշտպանական ամրություններին։ Ահա այդ պահին Մ. Յոթնեղբայրյանի հրամանով հայերը կրակում են և փախուստի մատնում հակառակորդին։ Ականատեսներից մեկը 1917 թ. գրում է, թե ինքն

ինչպիսի հիացմունքով է դիտել թուրքերի սարսափահար փախուստը, որոնք տանում են վիրավորներին ու սպանվածների դիակները։

Հասկանալի է, որ թշնամին չէր կարող հաշտվել այդ ամենի հետ։ Շուտով Ջեմալ փաշայի կարգադրությամբ Ուրֆա է գալիս Ֆահրի փաշան և հոկտեմբերի 1-ին 12 հազարանոց բանակով հարձակվում հայերի վրա։ Թշնամին ռմբակոծում է ամբողջ օրը և հաշվի չառնելով իր մեծաթիվ կորուստները, ամեն կերպ ձգտում է ներխուժել հայոց դիրքերը։ Ինքնապաշտպանության ղեկավարները ծուղակ են սարքում. թույլ են տալիս, որ հակառակորդը խորանա դեպի իրենց ամրությունները, ապա շրջափակում են նրան, վերցնում աքցանի մեջ։ Նրանք գործադրում են նաև նռնակներ և լիակատար ոչնչացնում թուրքերին։ Թշնամին տալով մեծ կորուստներ, հարկադրված է լինում նահանջել։ Տղամարդկանց հետ միասին իրենց սխրագործություններով աչքի են ընկնում նաև կանայք՝ Մարիամ Ջիլինկերյանը, Ազնիվ Երիզյանը, Խանում Քեթենճյանը, ինչպես և պատանիները՝ Նազարեթ Պագալյանը, Գարեգին Բերեճիքյանը, Հարություն Թերեքճյանը և ուրիշներ։

Պարտված թշնամին առժամանակ դադարեցնում է հարձակումը, սակայն շարունակում է թնդանոթային պարբերական ռմբակոծումները։ Մկրտիչ Յոթնեղբայրյանը, օգտագործելով հարաբերական դադարը, որոշում է ոչնչացնել հակառակորդի թնդանոթները։ Նրա հանձնարարությամբ մի խումբ կտրիճներ, հագնելով քրդի տարազ, թա-

փանցում են թուրքերի դիրքերը, սպանում են նրանց հրետանավորներին և փչացնում հրանոթները։

1915 թ. հոկտեմբերի 7-ին զորահրամանատար Ֆահրի փաշան փորձում է խաբեությամբ ձեռք գցել հայերին ու ոչնչացնել նրանց։ Նա պահանջում է, որ հայերը հանձնվեն, խոստանալով ապահովել նրանց անձի ու գույքի անձեռնմխելիությունը, հակառակ դեպքում սպառնում է հիմնահատակ կործանել հայոց թաղամասը։ Սակայն Մ. Յոթնեղբայրյանը Զինվորական խորհրդի որոշումով մերժում է նրա պահանջը և պատասխան գրության մեջ նշում, որ կարիք չկա իրար խաբելու։ «Չենք ուզեր ծիծաղելի ըլլալ ձեր աչքին... հանգիստ ձգեք մեզ՝ մեր պատնեշներուն վրա՝ մինչև պատերազմին վախճանը։ Ուրֆայի հայությունը պիտի կռվի մինչև վերջին մարդը. ոչ դուք պիտի խնայեք մեզ և ոչ ալ մենք ձեր զինվորներուն»[1]։

Թշնամին անցնում է նոր հարձակման։ Նրա թնդանոթները որոտում են ամեն կողմից, խփում հայերի դիրքերին ու տներին, գնդացիրները կրակ են թափում նրանց վրա, իսկ զինվորները «սալավաթ» գոռալով գրոհի են նետվում։ Թուրք հրամատանարությունը ձգտում է թեկուզ մեծ զոհերի գնով հասնել փոքր նվաճումների։ Սակայն չի կարողանում։ Հայերը թուրքերին պատշաճ հակահարված են տալիս, կանգնեցնում են նրանց առաջխաղացումը՝ պատճառելով մեծ կորուստներ։ Կռվի ընթացքում վիրավորվում է Մ. Յոթնեղբայրյանը, սակայն չի հեռանում իր դիրքից։ Նա շարունակում է քաջալերել իր ռազմիկներին, արիացնել նրանց խոսքերով ու խորհուրդներով։ Բայց արդեն անկարող էր անցնել դիրքից դիրք և վերադասավորել ուժերը։ Ինքնապաշտպանության գործն ստանձնում է Հարությունն Ռասթեկելյանը։ Հայերը կռվում են գիշեր ու ցերեկ, անքուն ու սոված։ Սպառվում են նրանց սննդամթերքը, ռազմապաշարը։ Նրանք հարկադրված են լինում լքել վտանգված դիրքերը, հավաքվել մայր եկեղեցում և պայքարը շարունակել «մինչև վերջին փամփուշտն ու մարդը»։ Հայերին չի ընկճում, որ թշնամին ռմբակոծում է արդեն տուն առ տուն, դիրք առ դիրք, ամեն ինչ վեր ածում ավերակների։ Այժմ նրանք դիրքեր են բռնում ավերակների վրա։ Սպանված ու վիրավոր տղամարդկանց փոխարինում են կանայք ու պատանիները, որոնք կրակում են ատրճանակներից, քարկոծում մոտեցող հակառակորդին։

Իթթիհատական զորամասում ծառայող և Թուրքիայում գորգի գործարանատեր գերմանացի էկարդը հիանում է հայերի դիմադրությամբ և ցանկանում է տեսնել Մ. Յոթեղբայրյանին։ Նրա ցանկությունը կատարվում է։ Էկարդը փորձում է համոզել հերոսամարտի ղեկավարին՝ դադարեցնել դիմադրությունը և հանձնվել, այլապես կարող են բոլորը կոտորվել։ Նա խոստանում է Մ. Յոթն-

1 «Դյուցազնական Ուրֆան և իր հայորդիները», աշխատասիրեց՝ Արամ Սահակյան, Պեյրութ, 1955, էջ 834։

եղբայրյանին փոխադրել Գերմանիա, իսկ դիմադրողներին ներման արժանացնել։ Սակայն Մ. Յոթընեղբայրյանն անդրդվելի էր, նա ասում է. «Եթե ձեր մեջ քաղաքակիրթ և քրիստոնյա մարդու զգացում կա, փրկեցեք անապատներու մեջ կոտորվող անմեղ հայ ժողովուրդը»[1]։ Ստրկամտություն ակնկալող գերմանական սպան վիրավորվում է հերոսամարտի ղեկավարի հպարտ ու հանդուգն պատասխանից և հեռանալով սպառնում, որ այսուհետև ինքն է ղեկավարելու հայկական դիրքերի ռմբակոծությունները։ Եվ իրոք, նա կատարում է իր խոսքը, կրակ թափելով հայերի վրա անսովոր դաժանությամբ։ Հրետանու կրակի պաշտպանությամբ թուրք զինվորները գրոհում են հայերի դիրքերը։ Հայերը, սակայն, շարունակում են արիաբար պաշտպանվել, սպանելով հրոսակներից շատերին։ Բայց զգալիորեն նվազում է նաև նրանց թիվը։ Ինքնապաշտպանության ղեկավարները, այնուամենայնիվ, որոշում են շարունակել մարտը այն հաշվով, որ պաշարվածների մի մասը կարողանա ճեղքել հակառակորդի օղակը և անցնել շրջակա լեռները։ Սակայն դա նրանց չի հաջողվում։ Եվ հայերը որոշում են՝ «մեռնել հերոսական մահով...»։

Թշնամու դեմ վարած ահեղ պայքարում մեկը մյուսի ետևից զոհվում են Հարություն Ռասթեկելյանը, Խորեն Քուպելյանը, Խոսրով Մեսրոպյանը, Մովսես Սուճյանը, Ավագ Թաշճյանը, Մկրտիչ Արզումայճյանը, Գրիգոր Տեր-Գրիգորյանը, Լևոն Լեբլեբիջին, Նազար Զմանյանը և շատ ուրիշներ։ Մկրտիչ Յոթնեղբայրյանը թշնամու ձեռքը չընկնելու համար ինքնասպան է լինում։ Նրա օրինակին հետևում են ուրիշները։ Կանանց ու աղջիկներից շատերը, գերադասելով մահն անպատվությունից, վերջ են տալիս իրենց կյանքին։ Գերված աղջիկներից մեկը, որին հրոսակները ուզում էին մերկացնել ու ծաղրուծանակի ենթարկել, ասում է. «Կեցեք, ես ձեռքովս մերկանամ», և ծոցագրպանից հանելով ատրճանակը, գնդակահարում է թուրք սպային ու ինքն էլ ընկնում ասկյարների գնդակից։

1915 թ. հոկտեմբերի 23-ին թուրքերը վերջնականապես գրավում են հայերի դիրքերը։ Նրանք գերվածների մեծ մասին սրի են քաշում կամ կախաղան բարձրացնում։ Քաղաքի 35 հազար հայերից կենդանի են մնում 5 հազարը, որոնց երիտթուրքական իշխանությունները քշում են Տեր-Զորի անապատները։

Արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվների նշանավոր դրվագներից մեկն էլ Մուսա լեռան հերոսամարտն էր։ Հայերն այստեղ հաստատվել էին դեռ խոր անցյալում։ Նրանք ենթարկվել էին բազմաթիվ փորձությունների ու արհավիրքների, բայց քաջության ու տոկունության շնորհիվ մնացել էին կանգուն, պահելով մայրենի լեզուն և քրիստոնեական հավատը։ Առաջին աշխարհամարտի նախօրյակին հայերն ապրում էին

1 «Հուշամատյան...», էջ 804։

Միջերկրականի ափին ընկած Սուեդիայի գավառի վեց գյուղերում՝ Բիթիաս, Հաջի-Հաբիբլի, Խդրբեգ, Յողուն-Օլուք, Վագրֆ ու Քեբուսին, որտեղ՝ ըստ որոշ հեղինակների կար 5000, իսկ ըստ այլոց՝ 6811 մարդ։

1915 թ. գարնանը սուեդահայերն արդեն լսել էին հայկական կոտորածների մասին, իսկ Զեյթունի ջարդերի լուրն իմացան այնտեղից իր հայրենի գյուղը՝ Յողուն-Օլուք վերադարձած Տիգրան Անդրեասյանից։ Ոմանք չհավատացին այդ լուրերին, բայց երբ 1915 թ. հուլիսի 28-ին ստացան երիտթուրքերի հրամանը բռնագաղթի մասին, տարակույսները ցրվեցին։ Հուլիսի 29-ին քահանա Աբրահամ Տեր-Գալստյանի տանը հրավիրվեց վեց գյուղերի ավագների խորհրդակցություն։ Մասնակիցները վերլուծելով իրադրությունը, եկան այն եզրակացության, որ ինչպես տեղահանությունը, այնպես էլ դիմադրությունը, այսինքն՝ ապստամբությունը մահ է։ Բայց պատվաբերը ապստամբությունն է, մանավանդ երբ այն կարող է հանգեցնել փրկության։ Ուստի որոշեցին թողնել տուն ու տեղ, վերցնել զենքերն ու պարենը և բարձրանալ Մուսա լեռը։ Սակայն այդ որոշմանը ենթարկվեցին 4231 մարդ, մնացած 2080-ը Բիթիասի քարոզիչ Նոխուտյանի գլխավորությամբ բռնեց տարագրության ճամփան և կոտորվեց։

1915 թ. հուլիսի 31-ից սուեդահայերը բարձրանում են Մուսա լեռը, տանելով իրենց հետ այն ամենը, ինչ կարող էին։ Մինչև օգոստոսի 3-ը նրանք ավարտեցին իրենց գաղթը, հաստատվելով

Թաթար Ալանկ լեռնահովտում։ Ապա ընտրվեց Զինվորական խորհուրդ, որի կազմում մտան Եսայի Յաղուբյանը, Պետրոս Դմլաքյանը, Պետրոս Գալուստյանը, Մարտիրոս Ճանազյանը և Հակոբ Իսկենդերյանը։ Նախագահ ընտրվեց Եսայի Յաղուբյանը, իսկ տեղակալ՝ Պետրոս Դմլաքյանը։ Այնուհետև նրանք կառուցեցին հյուղակներ, ճամբարներ, զորանոցներ, պատնեշներ, խրամատներ և կրակակետեր։ Զինվորական խորհուրդը նշեց չորս ճակատ, ուր պետք է տեղի ունենային կռիվները և ըստ այդմ էլ դասավորեց եղած ուժերը։

Մուսալեռցիները դեռ չէին ավարտել իրենց դասավորությունը, երբ օգոստոսի 7-ին թշնամին շարժվեց դեպի նրանց դիրքերը։ Սկսվեց ահեղ կռիվ, որը տևեց վեց ժամ։ Հայերը թուրքերին տվեցին արժանի հակահարված և ետ շպրտեցին։ Օգոստոսի 9-ին Սուեդիայի գավառապետը նամակ է ուղարկում մուսալեռցիներին, առաջարկելով հանձնվել։ Չստանալով պատասխան, օգոստոսի 10-ին թուրքերն անցնում են նոր հարձակման՝ շուրջ 2000 զինվորներով և թնդանոթներով։ Կռիվը տևում է 12 ժամ։ Դիրքերը ձեռքից-ձեռք են անցնում։ Որոշ կետերում թշնամին նեղում է ապստամբներին և գրավում առաջին բնագիծը։ Սակայն հայերը ծուղակի մեջ են գցում հրոսակներին, ջախջախում կամ փախուստի են մատնում նրանց, գրավելով զենքերը։ Կատաղած հակառակորդը կազմակերպում է նոր գրոհներ, բայց մուսալեռցիները վերստին կանխում են։ Իր սրախրագործություններով հռչակվում է հատկապես

Պետրոս Գալուստյանը, որը դիպուկ կրակոցներով սպանում է հակառակորդի թնդանոթաձիգներին և գերի վերցնում մարտկոցի հրամանատարին։ Խիզախորեն է մարտնչում նաև Հակոբ Գարագոզյանը, փախուստի մատնելով ու սպանելով թուրք զինվորներին։ Նա վիրավորվում է։ Երբ զինակիցները ուզում են նրան տանել անվտանգ տեղ, պահանջում է. «Կաղաչեմ, ինձմով մի զբաղիք։ Ես արդեն ինչ որ պիտի ըլլամ եղած եմ. դուք գացեք և թշնամիին դիմադրեցեք։ Մանավանդ մի տարակուսիք վերջնական հաղթանակի վրա։ Մերը պիտի ըլլա ան»[1]։ Հերոսաբար կռվում են նաև հայ կանայք, որոնք քարեր են գլորում թուրք զինվորների վրա։ Օգոստոսի 10-ի մարտերում երկու կողմերն էլ զոհեր տվեցին։ Սակայն թուրքերինն անհամեմատ շատ էր։ Հայերը թաղեցին իրենց ռազմիկներին, իսկ թուրքերը հավաքելով իրենց զոհերին, նահանջեցին։

Օգոստոսի 19-ին թշնամին ձեռնարկում է նոր հարձակում, ունենալով այս անգամ 3000 կանոնավոր զինվոր և 4000—5000 խաժամուժ։ Օգտագործելով թանձր մառախուղը, նա գրավում է հայկական որոշ դիրքեր, բայց մուսալեռցիներն արիաբար պաշտպանվում են և, անսպասելի հարձակվելով հակառակորդի կենտրոնական դիրքերի վրա, խուճապի մատնում նրան։ Կռիվը տևում է 14 ժամ և ավարտվում հայերի հաղթանակով։

1 «Հուշամատյան Մուսա լեռան», խմբագրեցին Մարտիրոս Քուշագճյան և Պողոս Մատուսյան, Պեյրութ, 1970, էջ 334։

Հաջորդ օրը թշնամին հավաքում է իր ուժերը և վերստին անցնում հարձակման։ Մուսալեռցիները ստիպված նահանջում են և ամրանում «Մահվան բլուր» կոչված իրենց վերջին բնագծում։ Այդ բլուրը զուր չէր կոչվում «մահվան», քանզի պիտի դառնար կողմերից մեկի գերեզմանը։ Գիշերային խավարում թուրքական զինվորները հաջողությամբ բարձրանում են բլուրն ի վեր, չհանդիպելով դիմադրության։ Հայերը նրանց համար թակարդ էին լարել։ Երբ հասնում է պահը, նրանք կրակ են թափում հրոսակների վրա, սպանում շատերին, այդ թվում նաև հրամանատար Հյուսեին էֆենդուն։ Ինքնապաշտպանության մարտիկները գրավում են պարենամթերք, հրացաններ ու փամփուշտներ։

Տեսնելով, որ դեմ առ դեմ չեն կարողանում հաղթել հայերին, թուրքերը որոշում են շրջափակել նրանց, զրկելով պարենամթերքի ու ռազմամթերքի աղբյուրներից։ Հակառակորդն ուզում է սովի մատնել հայերին, ծնկի բերել և ոչնչացնել նրանց։ Սակայն հայերը մնում են անդրդվելի։ Նրանք տեսնում են, որ թշնամին իրենց շրջափակել է միայն ցամաքից, իսկ ծովն ազատ է թողել, ընտրում են չորս լավագույն լողորդներ (Մովսես Գրիգորյան, Կարապետ Խաղցնյան, Աբրահամ Գոջանյան ու Տիգրան Մավլիկյան) և տալիս նամակներ, որ հասցնեն դրանք Անտիոքի ծովախորշով անցնող Անտանտի երկրների նավերին։ Այդ նամակներում նրանք խնդրում էին փրկել Մուսա լեռան հայերին, կամ զենք ու պարենամթերք տալ՝ հակառակորդի դեմ ազատագրական պայքարը

շարունակելու համար։ Սակայն լողորդները վերադառնում են ձեռնունայն։ Այնժամ ինքնապաշտպանվողները վերցնում են երկու լայնատարած սավաններ, մեկի վրա գրում «Քրիստոնյաները վտանգի մեջ են, փրկեցեք», իսկ մյուսի վրա նկարում մեծ խաչ։ Դրանք ամրացնում են «երկու բարձրադիր ծովահայաց բլուրներու վրա», կողքին վառում խարույկներ և նշանակում պահակներ, որ եթե Անտանտի նավերն անցնեն՝ օգնության հասնեն։ Չբավարարվելով դրանով, ինքնապաշտպանության մարտիկները նաև լողորդներ են ուղարկում Կիպրոս, տալով նրանց երեք տուփ (բիթելյա), որոնցից մեկը պետք է հանձնեին Հալեպի ամերիկյան հյուպատոսին, մյուսը՝ Հալեպի հայոց հոգևոր առաջնորդին, իսկ երրորդը՝ Հալեպի ճամփով Պողոս Նուբար փաշային, խնդրելով օգնություն։ Բայց ապարդյուն. մուսալեռցիները չեն ստանում որևէ պատասխան։ 1915 թ. սեպտեմբերի 5-ին ֆրանսիական «Կիշեն» ռազմանավը, նկատելով խարույկը, մոտենում է Մուսա լեռան ափերին ու խարիսխ գցում։ Ապա մակույկ է ուղարկում ու վերցնում պահակներին, որոնք բարձրանալով նավ՝ պատմում են իրենց ծանր վիճակի մասին և օգնություն խնդրում։ Կապիտան Բիրսոնը այդ մասին հայտնում է հրամանատարությանը։ Սակայն օգնությունն անմիջապես չի գալիս։ Ռազմանավը ռմբակոծում է թուրքական դիրքերն ու հեռանում, խոստանալով օգնել մուսալեռցիներին։

Սեպտեմբերի 9-ին թշնամին պահանջում է հայերին հանձնվել, նորից սպառնալով, որ դիմադրության դեպքում բոլորին կբնաջնջի։ Հայերը դեռ չէին հասցրել պատասխանել, երբ որոտում են հակառակորդի թնդանոթները։ Այժմ նա ձեռնարկում է ավելի կատաղի գրոհ, ապացուցելով, որ խոսքից անցնում է գործի։ Մուսալեռցիների համար դա անսպասելի չէր։ Թշնամու գրոհին նրանք պատասխանում են հակագրոհով, մանավանդ, որ ֆրանսիական ռազմանավը նրանց տրամադրել էր պարենի ու ռազմամթերքի պաշարներ։ Շուտով հայերը փախուստի են մատնում թուրքերին։ Սեպտեմբերի 10-ին երևացին ֆրանսիական ռազմանավերը և սկսեցին ռմբակոծել թուրքերի դիրքերը։ Իսկ սեպտեմբերի 14-ին ֆրանսիական «Ժաննա դը Արկ» շոգենավը և անգլիական մի նավ՝ ռազմանավերի ուղեկցությամբ, մոտենում են մուսալեռցիներին և վերցնելով բոլորին, տեղափոխում Պորտ Սայիդ։ Նրանք, այդպիսով, թուրքական վանդալիզմից փրկում են ավելի քան 4000 հայ[1]։

Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերում հայերից, իհարկե, եղան զոհեր, որոնց թվում էին նաև պաշտպանության ակտիվ կազմակերպիչներ ու գործիչներ Հակոբ Գարագոզյանը, Պողոս Անդեկյանը, Աբրահամ Սևուկյանը, Հակոբ Դավթյանը, Սամվել Մարգարյանը, Սամվել Պո-

[1] Տե՛ս Ե. Ղ. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914—1918 թթ., Երևան, 1964, էջ 288։

յաճյանը, Միսաք Պայրամյանը, Պաղդասար Մարտիկյանը և ուրիշներ։ Սակայն պաշտպանության ղեկավարներին՝ Եսայի Յաղուբյանին ու Պետրոս Դմլաքյանին բախտ է վիճակվում ողջ մնալ և, դեգերելով օտար երկինքների տակ, վերջապես, ապաստանել Խորհրդային Հայաստանում, մասնակցել իրենց հայրենիքի վերակառուցմանը։ Նրանց աճյունը հանգչում է հայրենի հողում։ Մուսա լեռան հերոսամարտը նկարագրված է ավստրիական անվանի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հռչակավոր վեպում, որը թարգմանված է աշխարհի բազմաթիվ լեզուներով։

Կոտորածների ժամանակ ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան նաև Թուրքիայի հայաբնակ այլ վայրերում՝ Բյուրիքում (Շապին-Գարահիսարի գավառ), Սինջարում (Դիարբեքիրի վիլայեթ), Ֆունջակում, Ֆոնուզում, Կիշելֆիլում, Բերեկոյում (Ադանայի վիլայեթ), Գուվաթ-Շափայում (Տրապիզոնի վիլայեթ), Պարտիզակում և այլ տեղերում։ Հայերը, որքան էլ կռվում էին արիաբար, որոշ դեպքերում ցուցաբերում նույնիսկ տևական դիմադրություն, այնուամենայնիվ թշնամու գերազանց ուժերի առաջ հարկադրված էին տեղի տալ։

1915 թ. ինքնապաշտպանական մարտերը հայ ժողովրդի պատմության փառապանծ դրվագներից են։ Նրանք ցույց տվեցին մեր ժողովրդի կենսունակությունը, թշնամու դեմ մաքառելու պատրաստակամությունը և հարատևելու կամքը։ Այդ մարտերն ապացուցեցին, որ հայերը, երբ դիմադրում էին թշնամուն, ավելի քիչ էին կոտորվում, քան, երբ հանձնվում էին նրա ողորմածությանը։ Ազգերի գոյատևման գաղտնիքը նրանց ստեղծագործության ու պայքարի մեջ է։

Երիտթուրքերն անցան գնացին՝ իրենց ոճրագործությամբ հարստացնելով պատմության աղբակույտը, սակայն նրանց գաղափարները մնացին։ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ իթթիհատի հետևորդները համախմբվեցին ֆաշիստների շուրջը՝ նպատակադրվելով նրանց օժանդակությամբ տապալել Խորհրդային Միությունը և հասնել իրենց համաիսլամական ու համաթուրանական ծրագրերի իրագործմանը։ Բայց նրանց ջանքերն ապարդյուն անցան։ Մեր օրերում նրանք հանդես են գալիս մահմեդական ծայրահեղականների ավանգարդում և ցանկանում են կենսագործել Թուրքիայի հետ միավորելու իրենց երազանքները։ Նրանց պլաններն այժմ նույնպես կտապալվեն, որովհետև դեմոկրատիայի զարգացումն ընթանում է բռնություններին ու ոճրագործություններին տրամագծորեն հակառակ ուղղությամբ։

Հայերի ցեղասպանությունից անցել է 75 տարի։ Նրանք բուժում են իրենց վերքերը, զարգացնելով իրենց տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքը, բայց երբեք չեն մոռանում իրենց կորցրած հայրենիքը և վառ են պահում զոհերի հիշատակը։ Նրանք պահանջում են, որ

Համաշխարհային մարդկությունն ընդունի հայկական ցեղասպանությունը և դատապարտի Թուրքերի աննախադեպ ոճրագործությունները, պահանջում են իրենց կորուստների արդար հատուցում և վանդալիզմի խսպառ վերացում։ Հայերի այդ իրավացի պահանջները մերժում են միայն բռնակալներն ու շահամոլները, իսկ մարդասիրական շրջանները ընդունում են ու պայքարում նրանց կենսագործման համար։ Աշխարհի սև ու մութ ուժերը որքան էլ դիմագրավեն, բյուրավոր առաջադեմ զանգվածները կհաղթանակեն։ Դա ապացուցում է համաշխարհային մարդկության քնականոն զարգացման ընթացքը։

ԱՂԱՏ ՍԱՐԳՍԻ ՀԱՄԲԱՐՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արևմտահայերի 1915 թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը

Հրատ. խմբագիր՝ Լ. Զ. Անանյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Հ. Կիրակոսյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Ս. Համբարձումյան
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Մ. Հակոբյան

Հանձնված է շարվածքի՝ 22.02.1990 թ.։
Ստորագրված է տպագրության՝ 22.03.1990 թ.։ ՎՖ 09252։
Ֆորմատ՝ 70×90 1/32։ Թուղթը՝ տպագրական № 2։ Տառատեսակը՝ «Գրքի սովորական»։ Տպագր. 2,75 մամուլ, հաշվ.-հրատ. 2,78 մամուլ։ Պատվեր՝ 392։ Տպաքանակը՝ 10.000։
Գինը՝ 90 կոպ.։
«Գիտելիք» հրատարակչություն, Երևան 10, Աբովյան փող. 8։
Издательство «Гителик», Ереван-10, ул. Абовяна, 8.

ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։
Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван-9, ул. Теряна, 91.